ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2018 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

Հայաստանի ազգային ագրարային

համալսարանի հոգաբարձուների

խորհրդի նիստում

29 հունվարի 2019թ.

արձանագրություն N----

Խորհրդի նախագահ՝ Ա.Հարությունյան

(ստորագրություն)

29 հունվարի 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

2018թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **4**
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ **7**
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ **19**
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ **21**
ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ 21
ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB) 22
Ի-ՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ 23
«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 23
«ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑ 24
«ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՀԱՎԱՍՏԱԳՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ 25
«ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՀԵՌԱՀԱՐ ԶՈՆԴԱՎՈՐՈՒՄ» ՀԱՎԱՍՏԱԳՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ 25
ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ **26**
ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 28
ԱԳՐՈԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 28
ԽԱՂՈՂԱՊՏՂԱԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 29
Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎ. ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԳՐՈՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՄԵԼԻՈՐԱՑԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 30
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ 32
ՍՆՆԴԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ 33
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ 35
ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ 41
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ 42
ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ 43
ԳՐԱԴԱՐԱՆ 44
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ **45**
ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ **48**
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ **50**
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ **53**
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ **55**
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ **61**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համար 2018 թվականը եղավ շրջադարձային: Համալսարանի հոգաբարձուների խորհրդի հուլիսի 31-ի նիստում նոր կազմի ձևավորմամբ, խորհրդի նախագահի և ռեկտորի պաշտոնակատարի ընտրությամբ արմատական բարեփոխումների սկիզբ դրվեց: Համալսարանի ներկայիս ղեկավարությունը, դասախոսական կազմը և ուսանողները ոտք են դրել ագրարային ոլորտի կրթության և գիտության զարգացման նոր՝ մարտահրավերներով լի ուղի:

Անցած տարին նշանավորվեց համալսարանում պետության ու հասարակության կրթական շահի հստակ գիտակցման արմատավորմամբ և շրջադարձային բարեփոխումների ճանապարհային քարտեզի ուրվագծմամբ: Ագրարային և հարակից ոլորտների արդիական կրթություն ապահովելու տեսանկյունից համալսարանի նոր ղեկավարությունը հանձնառու է մշակել միջազգային փորձի և աշխատաշուկայի իրական կարիքների վրա հիմնված ուսումնական պլաններ, ինչպես նաև ապահովել արդիական տեխնոլոգիաներով հագեցած ուսանողակենտրոն կրթական միջավայր:

2018թ. փետրվարին ընդունված համալսարանի զարգացման 2018-2022թթ. ռազմավարական ծրագրում նշված են համալսարանի զարգացման հիմնական ուղղությունները, գլխավոր նպատակները, առաջնայնությունները և այլն: Սակայն բարեփոխումներով պայմանավորված համալսարանի հավակնությունները առկա խնդիրների նկատմամբ պահանջում են ավելի լուրջ մոտեցում և ուղենիշների ճշգրտում: Ուստի, նոր ռազմավարական պլանով պետք է վերաիմաստավորել առաջնայնությունները և ըստ այդմ մշակել մշտադիտարկման ու կատարողականի ցուցիչներ:

Հրատապ անհրաժեշտությունից ելնելով՝ 2018թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին համալսարանում կատարվել են մի շարք կառուցվածքային և այլ բարեփոխումներ, որոնց էությունն ու ուղղությունները ներկայացված են ստորև:

➢ Համալսարանի ֆակուլտետներում և ամբիոններում գործառույթների կրկնումից խուսափելու, ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման, կրթական գործընթացի բարելավման նպատակով կատարվել են հետևյալ կառուցվածքային փոփոխությունները՝

<u>Ագրոնոմիական ֆակուլտետ</u>

Չորս ամբիոնների միավորմամբ ձևավորվել է երկու նոր ամբիոն՝

- **Անտառագիտության և ագրոէկոլոգիայի,**
- **Հայոց և օտար լեզուների:**

<u>Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ</u>

Ֆակուլտետը կազմավորվել է Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի և Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետների միավորման միջոցով: Յոթ ամբիոնների միավորմամբ ձևավորվել է երեք նոր ամբիոն՝

- **Ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների,**
- **Գյուղատնտեսության ավտոմատացման և տեխնիկայի շահագործման,**

- **Կիրառական մեխանիկայի և գրաֆիկայի:**

<u>Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ</u>

Սննդի արդյունաբերության սարքավորումների, կաշվի և մորթու տեխնոլոգիայի ամբիոնը վերանվանվել է **Սննդի արդյունաբերության սարքավորումների ամբիոն,** իսկ կաշվի և մորթու տեխնոլոգիայի առարկաները տեղափոխվել են Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոն:

<u>Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ</u>

Ֆակուլտետը կազմավորվել է Ագրոբիզնեսի և շուկայաբանության ու Տնտեսագիտական ֆակուլտետների միավորման միջոցով: Ինն ամբիոնների միավորմամբ ձևավորվել է չորս նոր ամբիոն՝

- **Ագրարային էկոնոմիկայի,**
- **Տվյալագիտության,**
- **Ֆինանսների և հաշվապահության,**
- **Հասարակական գիտությունների:**

Որպես միջանկյալ բարեփոխումների արդյունք՝ համալսարանի 7 ֆակուլտետներից կազմավորվել է 5 ֆակուլտետ, իսկ 42 ամբիոնից՝ 31 ամբիոն:

➢ Դասավանդման գործընթացում բարեփոխումների իրականացումը սկսվել է առավել առարկայական, ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ՝ ուսանող-դասախոս փոխադարձ կապի ապահովման միջոցով՝ բացառելով թելադրություն-ների ձևով ուսումնական նյութի մատուցումը:

Առարկաների դասաժամերից դուրս ուսանողների ուսումնառության համար ստեղծվել է էլեկտրոնային հարթակ, որտեղ տեղադրվում են առարկաների վերաբերյալ տեսական և դիդակտիկ նյութեր: 2018թ. սեպտեմբեր ամսին իրականացվել են **Moodle համակարգի** ծրագրային թարմացման աշխա-տանքներ, սերվերային հատվածի տեխնիկական վերազինում, որոնց շնորհիվ համակարգում ներկայումս մուտքագրված են 1623 առարկա և 1730 ուսանողի վերաբերյալ տեղեկատվություն:

Աշխատանքներ են կատարվել **միջազգային կառույցների աջակցությամբ ճարտարագիտական և քիմիական լաբորատորիաների վերազինման** ուղղությամբ: Ֆինանսավորում ստանալու ակնկալիքով կազմվել և միջազգային ու դոնոր կազմակերպություններին ներկայացվել են ծրագրային առաջարկների հայտեր: Այս ուղղությամբ քննարկումները շարունակվում են:

Նշված նախաձեռնությունների կենսագործումը կնպաստի համապատաս-խան մասնագիտությունների ուսումնական գործընթացի էական բարելավմանը և ուսանողների տեսական գիտելիքների ու գործնական հմտությունների զարգացմանը:

➢ Միջոցներ են ձեռնարկվել «**Բալահովիտ**» **ուսումնափորձնական տնտեսության բարելավման և կառավարման արդյունավետության բարձրացման**, մասնավորապես՝ տոհմային անասնաբուծության զարգացման և կաթնամթերքի ուսումնական արտադրամասի արդյունավետ գործունեության ուղղություններով:

Աշխատանքներ են կատարվել «**Ոսկեհատ**» **ուսումնափորձնական տնտեսության** կարողությունների լիարժեք օգտագործման, մասնավորապես՝ **Գինեգործության ուսումնագիտական կենտրոնի** կարողությունները ուսումնական ու գործնական նպատակներին ծառայեցնելու ուղղությամբ: 2018թ. դեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀԱԱՀ գինեգործարանի և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ICARE) միկրոգինեգործության կենտրոնի բացման արարողությունը: Միջոցառման ընթացքում հյուրերը համտեսեցին Արենի և Հաղթանակ սորտերի խաղողից ուսանողների պատրաստած գինին: Նախագիծն իրականացվել է Համաշ-խարհային բանկի, ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի, GIZ-ի և Գերմանիայի կառավարության աջակցության շնորհիվ:

Տնտեսությունում կիիմնվի նաև արդիական տեխնոլոգիաներով հագեցած փորձացուցադրական 2 հա տարածք: Այդ նպատակով 2018թ. նոյեմբերի 28-ին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի (ԳԶՀ) և համալսարանի միջև: Տնտեսությունում աշխատելու են հայ և արգենտինացի մասնագետներ: Հայկական բարեգործական ընդհանուր միությունից ֆինանսավորվող այս ծրագիրը կնպաստի ինչպես ուսանողների, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառի տնտեսավարողների՝ արդիական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների զարգացմանը:

➢ Փաստաթղթաշրջանառության արդյունավետության բարձրացման և ռեսուրսների խնայողության նպատակով համալսարանը բուհերից առաջինն է ներդրել **էլեկտրոնային փաստաթղթաշարժի Mulberry-2 համակարգը**:

➢ Համալսարանում կարևորվում է անգլերենի իմացությունը. կազմա-կերպվում են անգլերեն լեզվի դասընթացներ: Ներկա փուլում դասընթացներին մասնակցում է սկսնակների և խորացված ուսուցման խմբերում ընդգրկված մոտ 160 ունկնդիր: Համալսարանում իրականացվում է նաև համակարգչային տարբեր ծրագրակազմերի ուսուցում:

Վերը նշված և շատ այլ բարեփոխումներն ուղղված են համալսարանի ներկայիս դիրքի ամրապնդմանը, հեղինակության բարձրացմանը, բարձրագույն կրթության ոլորտում մրցունակության ապահովմանը և հետագա զարգացման համար նախադրյալների ստեղծմանը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի առաքելությունը ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրի, Բոլոնիայի գործընթացի և ռազմավարական պլանի սկզբունքներին համապատասխան կրթական, գիտական և խորհրդատվական գործունեության իրականացումն է ագրարային ոլորտում: Համալսարանում պարբերաբար կատարվում է ուսումնական գործընթացների կազմակերպման և համակարգման աշխատանքների վերլուծություն: Ներկայումս շարունակվում են ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգի լիարժեք կազմակերպման, կրթական և առարկայական ծրագրային բարեփոխումների իրականացման, ուսանողների ու դասախոսների ակադեմիական շարժունության խթանման, որակի ապահովման և գնահատման եվրոպական կրթական չափանիշների ու սկզբունքների, շարունակական կրթության համակարգի ձևավորման, կրթության կազմակերպման և կառավարման գործընթացներում ուսանողների դերի ու ազդեցության բարձրացման, մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների ապահովման ուղղությամբ աշխատանքները:

Աղյուսակ 1

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տարբեր կրթական ծրագրերով ուսանող/ուսումնառողների թիվը
(ուսանողների շարժը 01.01.2018թ.-01.01.2019թ. դրությամբ)

2018 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. հունվարի 1-ը տարբեր կրթական ծրագրերով ուսումնառողների շարժի վերաբերյալ տեղեկատվություն:

Հ/հ	Ուսուցման ձևը	Ուսանողների թիվն առ 01.01.2018թ.		Ընդունելություն	Վերականգնում	Տեղափոխություն				Շրջանավարտ	Հեռացում (ուսումից)	Ուսանողների թիվն առ 01.01.2019թ.	
		ընդամենը	որից՝ դարկերման մեջ գտնվող			մեկ բուհից	մեկ մասնագիտ. մեկ բուհ	մեկ բուհ մեկ	մեկ մասնագիտ. մեկ			ընդամենը	որից՝ դարկերման մեջ գտնվող
1	Առկա (բակալավր)	2899	626	315	23	3	56	4	328	359	124	2480	555
2	Հեռակա (բակալավր)	4830	446	520	339	-	353	-	21	609	1137	4275	454
3	Մագիստրա-տուրա	318	12	124	7	-	-	-	-	226	36	187	28
4	Ասպիրան-տուրա	88	2	4	-	-	-	-	-	12	17	63	1
5	Քոլեջ	496	51	177	9	-	1	-	-	115	76	492	34
6	Վանաձորի մասնաճյուղ	406	38	59	7	-	3	-	-	89	52	334	39
7	Սիսիանի մասնաճյուղ	230	15	21	24	-	-	-	-	43	44	188	15
8	Շիրակի գյուղ. քոլեջ	196	10	48	10	-	-	-	-	59	53	142	10
9	Վարժարան	289	-	124	-	-	-		-	46	45	322	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	9752	1200	1392	419	3	413	4	349	1558	1584	8484*	1136
*Այդ թվում՝ 1653 իգական սեռի և շուրջ 29 հաշմանդամություն ունեցող													



Նկ. 1. ՀԱԱՀ առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվն ըստ ֆակուլտետների:

2018/2019 ուստարում համալսարանում Ագրոպարենային համակարգի տնտեսագիտության մասնագիտությունների հեռակա ուսուցման համար դիմորդների թիվը կազմել է 70 (սահմանային շեմը հաղթահարել է 10 դիմորդ), Սիսիանի մասնաճյուղում՝ 12 դիմորդ (սահմանային շեմը հաղթահարել է 1 դիմորդ), Վանաձորի մասնաճյուղում՝ 7 դիմորդ (սահմանային շեմը հաղթահարել է 2 դիմորդ):

Նշված մասնագիտություններով ընդունելության թվի նկատելի նվազումը պայմանավորված է քննությունների օբյեկտիվ անցկացմամբ: Բուհում առկա մնացած մասնագիտությունների առումով ընդունելության թվի ակնհայտ նվազում չի գրանցվել, քանի որ այդ մասնագիտություններով ընդունելությունն իրականացվում է միջնակարգ կրթության ատեստատի հիման վրա:

Ըստ մասնագիտությունների՝ ընդունված ուսանողների թիվը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ընդունված ուսանողների թիվն ըստ մասնագիտությունների

Ըստ մասնագիտությունների՝ 2017-2018 ուստարվա ընդունելություն						Ըստ մասնագիտությունների՝ 2018-2019 ուստարվա ընդունելություն					
Մասն. դասիչը	Մասնագիտություն	Պլանային ընդունելություն		Փաստացի ընդունելություն		Մասն. դասիչը	Մասնագիտություն	Պլանային ընդունե-լություն		Փաստացի ընդունե-լություն	
		պետ.	վճ.	պետ.	վճ.			պետ.	վճ.	պետ.	վճ.
081101.02.6	Բույսերի պաշտպանություն	6	24	6	14	081101.02.6	Բույսերի պաշտպանություն	6	22	-	7
052201.02.6	Ագրոէկոլոգիա	5	25	5	27	052201.02.6	Ագրոէկոլոգիա	4	25	2	23
081101.02.6	Անտառ. տնտեսութ. և բնակ. կանաչապատում	4	26	4	8	081101.02.6	Անտառ. տնտեսութ. և բնակ. կանաչապատում	4	22	2	5
081101.01.6	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	10	50	10	31	081101.01.6	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	10	50	2	5
081101.03.6	Պաշտպանված գրունտի տեխնոլոգիա	4	21	4	13	081101.03.6	Պաշտպանված գրունտի տեխնոլոգիա	4	20	2	2
072101.05.6	Ձկան և ձկնամթ. տեխնոլոգիա	3	32	3	1	072101.05.6	Ձկան և ձկնամթ. տեխնոլոգիա	4	32	1	-
072101.02.6	Խմորման արտ. տեխնոլոգիա և գինեգործություն	5	50	5	32	072101.02.6	Խմորման արտ. տեխնոլոգիա և գինեգործություն	5	50	5	40
072101.04.6	Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա	4	31	4	2	072101.04.6	Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա	5	31	1	6
072101.03.6	Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտ. տեխնոլոգիա	4	31	5	13	072101.03.6	Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտ. տեխնոլոգիա	5	31	2	12
072101.07.6	Մսի և մսամթերքի տեխնոլոգիա	4	31	4	11	072101.07.6	Մսի և մսամթերքի տեխնոլոգիա	4	31	3	6

072301.02.6	Կաշվի և մորթու արտադրանքի տեխնոլոգիա	3	22	3	-	072301.02.6	Կաշվի և մորթու արտադրանքի տեխնոլոգիա	3	27	1	-
072301.03.6	Գյուղ. և պարենային արտ. փաթեթավ. տեխն. և դիզայն	2	23	2	8	072301.03.6	Գյուղ. և պարենային արտ. փաթեթավ. տեխն. և դիզայն	2	23	-	-
072101.09.6	Գյուղ. հումքի և պարեն. արտ. փորձ. ստանդ. և սերտիֆիկ.	4	31	4	28	072101.09.6	Գյուղ. հումքի և պարեն. արտ. փորձ. ստանդ. և սերտիֆիկ.	4	31	4	28
072101.06.6	Կաթի, կաթնամթերքի մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա	8	62	8	10	072101.06.6	Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա	8	62	2	14
041801.03.6	Ապրանքագ. և ապրանքի որակի փորձաքննություն	1	39	1	5	041801.03.6	Ապրանքագ. և ապրանքի որակի փորձաքննություն	1	39	1	-
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում	1	49	1	-	041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում	-	49	-	-
041801.03.6	Ապահովագրական գործ	1	39	1	-	041801.03.6	Ապահովագրական գործ	1	39	1	-
041201.01.6	Ֆինանսներ	1	59	1	5	041201.01.6	Ֆինանսներ	-	59	-	-
031802.01.6	Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբե-ության էկոնոմիկա	4	98	5	13	031802.01.6	Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբե-ության էկոնոմիկա	2	98	2	7
041801.01.6	Ագրոբիզնես	3	47	3	5	041801.01.6	Ագրոբիզնես	3	47	3	-
031802.02.6	Ագրար. քաղաք. խորհրդատվություն և տեղեկատվություն	4	66	4	4	031802.02.6	Ագրար. քաղաք. խորհրդատվություն և տեղեկատվություն	3	66	3	-

073201.07.6	Հողաբարելավ., հողային և ջր. պաշար. օգտ., հիդր. կառուց.	5	35	5	15	073201.07.6	Հողաբարելավ., հողային և ջր. պաշար. օգտ., հիդր. կառուց.	5	35	1	12
073201.05.6	Հողաշինարարություն, հողային կադաստր	3	47	3	5	073201.05.6	Հողաշինարարություն, հողային կադաստր	3	47	3	-
071202.01.6	Կենսագործունեության անվտանգություն	3	27	3	29	071202.01.6	Կենսագործունեության անվտանգություն	3	27	1	21
071602.01.6	Գյուղ. մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	6	59	7	47	071602.01.6	Գյուղ. մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	6	59	5	24
071601.03.6	Փոխադրում. և ճանա-պարհ. երթևեկութ. կազմակ. և կառավ.	5	65	5	2	071601.03.6	Փոխադրում. և ճանա-պարհ. երթևեկութ. կազմակ. և կառավ.	-	65	-	-
071602.02.6	Գյուղ. էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում	2	28	2	15	071602.02.6	Գյուղ. էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում	3	28	-	7
084101.01.6	Անասնաբուժություն	7	53	7	32	084101.01.6	Անասնաբուժություն	6	53	1	12
084101.02.6	Անասնաբուժ. սանիտարակ. փորձաքննություն	5	20	6	20	084101.02.6	Անասնաբուժ. սանիտարակ. փորձաքննություն	6	20	2	12
081102.02.6	Գյուղ. կենդ. սելեկցիա, գենետիկա և կենսատեխնոլոգիա	6	24	6	1	081102.02.6	Գյուղ. կենդ. սելեկցիա, գենետիկա և կենսատեխնոլոգիա	7	21	-	-
						084101.03.6	Դեղագիտություն	2	10	1	9
Ընդամենը		123	1214	127	396			119	1219	51	252*

*- Եվս 12 ուսանող ընդունվել է վճարովի:

Ընդունելության տեղերի նվազումը պայմանավորված է 2018թ. դպրոցների շրջանավարտների թվով, որը նախորդ տարիների շրջանավարտների թվի համեմատությամբ էականորեն ցածր է: Դիմորդների թվի նվազմանը նպաստել է նաև տարկետման արտոնության բացակայությունը:

Գերակա խնդիր է մասնագիտությունների համալրումը: Ներկայումս համալսարանում առկա որոշ ոլորտային մասնագիտություններ շրջանավարտների և գործատուների համար «գայթակղիչ չեն»: Ուստի անհրաժեշտ է իրականացնել ագրարային ոլորտի մասնագիտությունների խոշորացում, ուսումնական պլանների փոփոխություն և արդիականացում: Առաջնային է բակալավրի կրթական ծրագրի 4 տարի 8 ամիս տևողությունից 4 տարի տևողության անցում կատարելը:

Բուհի մասնագիտությունները դիմորդների համար նախընտրելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է առաջիկայում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ և մասնագիտական կողմնորոշմանն ուղղված քայլեր:

Աղյուսակ 3

ՈՒսանողների ակադեմիական առաջադիմության վերջին երկու տարիների արդյունքները

Ֆակուլտետ	**2016-2017 ուսումնական տարի**				**2017-2018 ուսումնական տարի**			
	1-ին կիսամյակ		**2-րդ կիսամյակ**		**1-ին կիսամյակ**		**2-րդ կիսամյակ**	
	ուս. թիվ	**առաջադիմ.**	**ուս. թիվ**	**առաջադիմ.**	**ուս. թիվ**	**առաջադիմ.**	**ուս. թիվ**	**առաջադիմ.**
Ագրոնոմիական	257	3,7	209	3,8	283	3,5	240	3,7
Անասնաբուժ. բժշկ. և անասնաբուծ.	232	3,6	231	3,6	236	3,7	233	3,6
Պարենամթ. տեխնոլ.	457	3,7	422	3,6	503	3,6	456	3,6
ԳՄ և ԱՏ	177	3,6	131	3,6	163	3,6	141	3,7
ՀՀ և ՀԿ	182	3,7	155	3,6	195	3,7	169	3,7
Տնտեսագիտ.	807	3,7	530	3,7	517	3,7	374	3,6
Ագրոբիզ. և շուկայաբանութ.	357	3,6	220	3,5	221	3,6	163	3,6
Ընդամենը ՀԱԱՀ	***2469***	***3,7****	***1898***	***3,7****	***2118***	***3,6****	***1777***	***3,6****

Աղյուսակ 4

2018 տարվա ընթացքում ՀԱԱՀ ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը բուհի միջոցների հաշվին
(տվյալները ներկայացված են 2017/2018 ուս. տարվա 2-րդ կիսամյակի և 2018/2019 ուս. տարվա 1-ին կիսամյակի համար)

2017/2018 ուս. տարի, առկա					**2018/2019 ուս. տարի, առկա**				
2-րդ կիսամյակ					**1-կիսամյակ**				
Ֆակուլտետ	**ներբուհական**		**քառօրյա**		**ներբուհական**			**քառօրյա**	
	ուս. թիվը	գեղչված գում.	ուս. թիվը	գեղչված գում.		ուս. թիվը	գեղչված գում.	ուս. թիվը	գեղչված գում.
Ագրոնոմ.	9	331.500	3	187.500	Ագր. ճարտար.	23	1 193.250	8	775.000
Ագրոբ. շուկ.	4	235.000	3	287.500	Ագրոբիզ. և տնտես.	40	3 229.500	20	2 040.000
Անասնաբուժ.	15	559.000	4	307.500	Պարեն. տեխ.	13	710.500	5	472.500
Տնտեսագիտ.	29	2 478.500	15	1 567.500	Ագրոնոմ.	11	579.000	3	187.500
Պարեն. տեխ.	16	694.500	4	385.000	Անասնաբուժ.	12	566.500	3	137.500
Գյուղ. մեք.	14	741.500	1	85.000	ATC	6	472.500		
Հիդրոմել.	11	555.000	8	747.500					
ATC	4	220.500							
ԸՆԴԱՄԵՆԸ	**102**	**5 815.500**	**38**	**3 567.500**	**ԸՆԴԱՄԵՆԸ**	**105**	**6 751.250**	**39**	**3 612.500**



Նկ. 2. Ուսման վարձի փոխհատուցումն ըստ ֆակուլտետների:

2017/2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում փոխհատուցվել է 140 ուսանողի (9383.000 դրամի չափով), իսկ 2018/2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում՝ 144 ուսանողի ուսման վարձը (10369.750 դրամի չափով): 2018 թ. բուհի միջոցների հաշվին փոխհատուցվել է առկա ուսուցման 284 ուսանողի ուսման վարձը. փոխհատուցվող գումարը կազմել է 19746.750 դրամ: Փոխհատուցվել են նաև մագիստրատուրայում սովորող 15 ուսանողի (1222.500 դրամի չափով), քոլեջի 23 ուսանողի (1101.000 դրամի չափով) և հեռակա ուսուցման դեպարտամենտի, Սիսիանի ու Վանաձորի մասնաճյուղերի շուրջ 1075 ուսանողի (96949.750 դրամի չափով) ուսման վարձերը:

Հարկ է նշել, որ համալսարանը փոխհատուցել (զեղչել) է բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողների 10%-ի ուսման վարձը՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի 7%-ի չափով:



Նկ. 3. Բուհից հեռացված/ազատված ուսանողների թիվը:



Նկ. 4. Սփյուռքահայ և օտարերկրացի ուսանողների թիվը:

Ըստ ներկայացված տվյալների՝ սփյուռքահայ և օտարերկրացի ուսանողների 57,3 %-ը Վրաստանից են, 27,9 %-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, իսկ մնացածը՝ այլ երկրներից:

2018թ. ՀԱԱՀ լեզվի ուսուցման կենտրոնն ուսանողների և աշխատակիցների համար իրականացրել է օտար լեզուների ուսուցում՝ լրացուցիչ կրթական ծրագրերով:

Անգլերենի ուսուցման վարձը համալսարանի ուսանողների և աշխատակիցների համար սահմանվել է 7100 դրամ, իսկ այլ բուհերից մասնակիցների համար՝ 8000 դրամ: 2017/2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում լեզվի կենտրոնի կողմից դասընթացներ անցկացվել են տարբեր մակարդակների 8 խմբերի համար:

2018թ. նոյեմբերից համալսարանի 156 աշխատակիցների համար կազմակերպվել են անգլերեն լեզվի դասընթացներ. ձևավորվել է տարբեր մակարդակների 11 խումբ: Պայմանագրային հիմունքներով դասընթացների մեկ փուլի արժեքը սահմանվել է 7000 դրամ, որի 50%-ը (3500 դրամ) փոխհատուցվել է բուհի միջոցների հաշվին:

Բուհի միջոցներով համակարգչային դասընթացներ են կազմակերպվել տվյալագիտության ամբիոնում. ուսանողների և աշխատակիցների համար ուսուցանվել են MS Word, MS Excell, PowerPoint, ինչպես նաև վիճակագրական STATA և SPSS ծրագրակազմերը: 2018թ. նշված դասընթացներին մասնակցելու համար դիմել է 154 մարդ, որից՝ 89 ուսանող և 65 աշխատակից: 89 ուսանողից 67-ին և 65 աշխատակցից 34-ին շնորհվել են համապատասխան վկայագրեր:

Բուհի միջոցներով կիրառական մեխանիկայի և գրաֆիկայի ամբիոնում 2018 թ. իրականացվել է AutoCAD ծրագրակազմի ուսուցում. մասնակցության համար դիմել է 105 մարդ, ձևավորվել է 13 խումբ, որից 8-ը դեկտեմբերին ավարտել է ուսուցումը, իսկ 5 խումբ շարունակում է ուսուցումը 2-րդ կիսամյակում:

Ըստ մասնագիտությունների ուսումնաարտադրական պրակտիկաներն անցկացվել են սահմանված ժամկետում. արձանագրվել է ուսանողների շուրջ 85,3% մասնակցություն: 2018թ. դրությամբ համալսարանը երկրի տարբեր մարզերում և տարածաշրջաններում կնքել է 115 պայմանագիր: Սակայն պրակտիկայի անցկացման վայրերում համապատասխան գործընթացների իրականացման փուլում առաջանում են խնդիրներ, քանի որ համագործակցող կողմերը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով շահադրդված չեն:

Ներկայումս համալսարանը քայլեր է ձեռնարկում գործատուների հետ սերտ և արդյունավետ համագործակցություն իրականացնելու, ինչպես նաև ուսանողների տեսական և գործնական գիտելիքները հարստացնելու ուղղությամբ: Ուսումնական պլաններում մեկ կիսամյակը տրամադրվելու է արտադրական պրակտիկային:

Համալսարանը 2018 թվականին տպագրման է ներկայացրել 54 անուն մեթոդական ցուցում, որից 27-ը տպագրվել է, իսկ մնացած 27-ը գտնվում է տպագրման փուլում: 2018թ. համալսարանում հրատարակվել է 6 ուսումնական ձեռնարկ:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ

ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղում հաշվետու տարում իրականացվել են ուսանողական համակազմի համալրմանը, կրթության որակի բարձրացմանը, նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, տեղեկատվական համալիր ապահովվածությանը և մայր բուհի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի հետ համագործակցությանը միտված աշխատանքներ:

Մասնաճյուղում սովորում է 188 ուսանող, որից 15-ը գտնվում է տարկետման մեջ:

Մասնաճյուղում բակալավրիական համակարգում գործում է ուսուցման հեռակա ձևը՝ հետևյալ մասնագիտություններով՝

- Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա (II, III կուրսեր)
- Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում (IV, V,VI կուրսեր)
- Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) (II կուրս)
- Հողաշինարարություն և հողային կադաստր (VI կուրս)
- Կաթի և կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա (II կուրս)
- Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա (V կուրս)
- Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն (I, II, III, IV, V, VI կուրսեր)
- Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա (I, II, III կուրսեր)
- Ագրոնոմիա (IV, V կուրսեր):

ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

2018թ. դեկտեմբերի 25-ի դրությամբ մասնաճյուղում սովորում է 334 ուսանող, որից 39-ը գտնվում է զինվորական ծառայության մեջ: Տարվա ընթացքում մայր բուհից մասնաճյուղ է տեղափոխվել 3 ուսանող, մասնաճյուղից հեռացվել է 52 ուսանող: 2019թ.-ին հեռակա ուսուցմամբ մասնաճյուղի առաջին կուրս է ընդունվել 59 ուսանող:

Ստորև ներկայացվում են մասնաճյուղի հեռակա ուսուցման կուրսերի ուսանողների շարժի վերաբերյալ համառոտ տվյալները 25.12.2018թ. դրությամբ:

- Ուսանողների ընդհանուր թիվը 01.01.2019թ. դրությամբ՝ 406
- Փոխադրվել են այլ բուհերից՝ 0
- Փոխադրվել են ՀԱԱՀ-ից՝ 3
- Վերականգնվել են նախկին ուսանողներ՝ 7
- Փոխադրվել են ՀԱԱՀ՝ 0
- Հեռացվել են՝ 52
- Շրջանավարտներ՝ 89
- Ընդունելություն՝ 59
- Գտնվում են զինծառայության մեջ՝ 39
- Գործող ուսանողների թիվը՝ 295
- Ուսանողների ընդունելության թիվը 22.12.2018թ. դրությամբ՝ 334

Մասնաճյուղի հեռակա ուսուցման «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում», «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Հողաշինարարություն և հողային կադաստր», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Գյուղատնտեսության մեքենայացում», «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» մասնա-գիտությունների գծով 31 կուրսերում ուսումնական գործընթացը կազմակերպվել է մայր

բուհի հեռակա ուսուցման դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀԱԱՀ Շիրակի գյուղատնտեսական քոլեջ մասնաճյուղում իրականացվում է առկա և հեռակա ուսուցում:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները.

- 1041 – Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)
- 0721 – Մսի և մսամթերքների տեխնոլոգիա
- 0728 – Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն
- 0421 -- Իրավագիտություն
- 0411 – Հաշվապահական հաշվառում
- 0413 – Մենեջմենթ (Կառավարում)
- 0414 – Ապրանքագիտություն

2018թ. հունվարի 1-ի դրությամբ քոլեջում ցերեկային ուսուցման համակարգում սովորել է 176 ուսանող, որից 10-ը՝ վճարովի, իսկ 19-ը՝ հեռակա ուսուցման համակարգում:

Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է ուսանողների անհարգելի բացակայությունների բավարար ցուցանիշ: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ նախորդ տարվա համեմատությամբ անհարգելի բացակայությունները նվազել են 20 %-ով:

Քոլեջը հիմնական դասախոսների համար կազմակերպել է կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստումներ՝ ուսումնական մոդուլային ծրագրերի իրականացման պահանջներին համապատասխան դասավանդման կարողություններ ապահովելու նպատակով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Համալսարանում իրականացվող մի շարք նորարարական կրթական ծրագրերի միջոցով միջազգային փորձն ու գործելակերպերը դարձել են առօրյա կրթական և հետազոտական գործունեության հիմք: Օրինակելի են Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի, «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրի, Ի-Վի-Էն գինու ակադեմիայի, «Սննդի անվտանգության համակարգերի կառավարում» և «Ջերմատնային մշակաբույսերի արտադրություն և կառավարում» կրթական ծրագրերի իրականացումն ու արդյունքները: Այս ծրագրերի միջոցով ձեռք բերված փորձն ու ամրագրված գործելակերպը հետևողականորեն ներդրվելու և կիրառվելու են համալսարանի բոլոր ֆակուլտետներում:

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնն ապահովում է եզակի կրթական միջավայր, որտեղ արժևորվում են կարողությունը, նախաձեռնողականությունը, ինքնուրույն աշխատանքը, ստեղծագործական մոտեցումն ու սեփական երկրին օգտակար լինելու պատրաստակամությունը: Ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների կիրառումը լիարժեք աշխատանքային միջավայր է ստեղծում ուսանողների թե՛ լսարանային, թե՛ ինքնուրույն աշխատանքի համար: Կենտրոնում կարևորվում է թիմային աշխատանքը, որի ժամանակ ուսանողները, մասնագիտական գիտելիքներից բացի, ստանում են նաև սեփական և այլոց աշխատանքի արդյունքների համար պատասխանատվություն ստանձնելու հմտություններ:

2017-2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում կենտրոնում սովորել է 36 ուսանող, 6 ուսանող Էրասմուս+ ծրագրի շրջանակում ուսումը շարունակել է եվրոպական 3 համալսարաններում: Գարնանային քննաշրջանում բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ:

Ուստարվա ավարտին 28 ուսանող հաջողությամբ հանձնել է պետական համալիր քննություններ: Նրանց շնորհվել է տնտեսագետ-շուկայագետի որակավորում, 3 ուսանող ստացել է գերազանցության դիպլոմ: Ուսանողներին տրվել են նաև Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:

2018թ. մայիսին կենտրոնում անցկացված բակալավրիատի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա 2018-2019 ուսումնական տարվա երրորդ կուրսում սովորում է 15 ուսանող, որից 7-ը՝ անվճար համակարգում:

2018թ. կենտրոնի 20 ուսանող կրթաթոշակ է ստացել Հրայր և Աննա Հովնանյան հիմնադրամից 165.000-ից 250.000 դրամի չափով:

Ուսումնաճանաչողական այցերը կենտրոնի կրթական գործընթացի անքակտելի մասն են կազմում և գործնական փորձ են հաղորդում ուսանողներին: 2018թ. ԱՈՒԿ-ի ուսանողներն ուսումնաճանաչողական 8 այցելություն են իրականացրել ագրոբիզնեսի տարբեր ընկերություններ, մասնակցել են Արենի գինու փառատոնին, ինչպես նաև Գյուղական կյանքի և ավանդույթների ամենամյա 5-րդ հոբելյանական փառատոնին: 2017-2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում կրտսեր կուրսի

ուսանողները նաև այցելել են Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության ագրոբիզնեսի մի շարք ընկերություններ:

2018թ. երրորդ կուրսի ուսանողների ամառային արտադրական պրակտիկան անցկացվել է Հայաստանի ագրոբիզնեսի ձեռնարկություններում, բանկերում և միջազգային կազմակերպություններում, ընդհանուր առմամբ՝ 18 ընկերություն, որոնց 50 %-ից ավելին ուսանողներին վճարել է պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքի համար: Ուսանողներից շատերին առաջարկվել է կնքել աշխատանքային պայմանագրեր:

Կրթական ծրագրին առանձնակի հետաքրքրություն են հաղորդում «Օրգանական գյուղատնտեսություն», «Ծրագրերի կառավարում», «Գյուղատնտեսական ֆինանսներ և վարկեր», «Ագրոբիզնեսի արժեշղթայի կառավարում», «Սննդամթերքի մասին օրենք և որակի վերահսկողություն», «Արտահանումների խթանում» մոդուլները, որոնք անցկացնում են փորձառու հրավիրյալ դասախոսներ և ոլորտի փորձագետներ:

2018 թ.-ին կենտրոնում կազմակերպվել են վերապատրաստման տարատեսակ կարճաժամկետ դասընթացներ՝ «Տնտեսական հարցերի լուծման նպատակով էկոնոմետրիկ մոդելների կիրառումը STATA-ի օգտագործմամբ», «Ձեռնարկությունների ռիսկերի կառավարում», «Կանխատեսումների մոդելներ», «Գործառնական կառավարում՝ օգտագործելով Solver հավելվածը» և այլ թեմաներով, որոնց 81 մասնակիցները տնտեսագետներ, բիզնես վերլուծաբաններ, գործարար ոլորտի պատասխանատուներ, խորհրդատուներ և ուսանողներ էին:

Կենտրոնը կազմակերպում է նաև անգլերենի խորացված դասընթաց ՀԱԱՀ այն ուսանողների համար, որոնք ցանկանում են ուսումը շարունակել Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում: 2018թ. դասընթացը վարում էր կենտրոնի դասախոս Սթիվեն Դոնաթելը, որը մասնագիտացած է ոչ անգլալեզու ուսանողներին անգլերեն ուսուցանելու բնագավառում:

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB)

2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրում սովորել է 28 ուսանող: 2018թ. մայիսի 19-ին ավարտական կուրսի 17 մագիստրանտ, որից 4-ը Վրաստանից էին, հաջողությամբ պաշտպանեցին մագիստրոսական ավարտական աշխատանքները: Շրջանավարտներին շնորհվեցին ՀԱԱՀ դիպլոմներ և Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:

2018-2019 ուստարում Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիրը համալրվեց առաջին կուրսի 15 ուսանողով, որից 7-ը ԱՈՒԿ-ի 2018թ. շրջանավարտներ են, մյուսները՝ ԵՊՀ, ՀՊՏՀ և այլ բուհերի: Ուսանողներից 3-ը սովորում են անվճար, ևս 2-ը՝ անվճար ԲՁ համակարգում:

2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակում 2-րդ կուրս է փոխադրվել 11 ուսանող, որից 3-ը սովորում են անվճար համակարգում: Մեկ մագիստրանտ Էրասմուս+ ծրագրի շրջանակում գործուղվել է Պորտուգալիայի Մինհո համալսարան՝ 6 ամիս ժամկետով ուսումը շարունակելու նպատակով:

Ագրոբիզնեսի դեպարտամենտի 9 մագիստրանտ 410.000-ական դրամի չափով կրթաթոշակ է ստացել Հրայր և Աննա Հովնանյան հիմնադրամից:

Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի ուսանողների և շրջանավարտների աշխատանքով ապահովվածության ցուցանիշը ձգտում է 100 %-ի:

Ի-ՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ

Ի-Վի-Էն գինու ակադեմիան առաջարկում է «Գինեգործություն և գինու բիզնես» 18-ամսյա մասնագիտական հավաստագրային ծրագիր Գերմանիայի Գայզենհայմի համալսարանի հետ համատեղ, ինչպես նաև՝ կարճատև դասընթացներ գինեսերների համար:

Կրթական գործընթացի տեխնոլոգիական հագեցվածության հարստացման միջոցով Ի-Վի-Էն գինու ակադեմիայում շարունակաբար բարելավվում է կրթական միջավայրը. այստեղ կիրառվում են որակի ապահովման ընթացակարգեր, կազմակերպվում են սոցիալական միջոցառումներ ուսանողների, շրջանավարտների և աշխատակազմի մասնակցությամբ, ինչպես նաև ուժեղացվում է ուսումնաարտադրական պրակտիկայի ծրագիրը՝ հաջողությամբ գործակցելով գործընկեր գինեգործարանների հետ: Ակադեմիայում հիմնվել են տարածաշրջանում եզակի գինու քիմիական և համտեսի արդիական ուսումնական լաբորատորիաներ:

Աշխատանքի տեղավորման ցուցանիշով Գինու ակադեմիան գերազանց դիրքում է. շրջանավարտներն ապահովված են մասնագիտական աշխատանքով գործնականում 100 %-ով:

2018թ. հունվար ամսին Ի-Վի-Էն գինու ակադեմիայում սովորում էր 33 ուսանող, 12-ը ՝ ավագ, 21-ը՝ կրտսեր կուրսերում:

2018թ. հունիսին ակադեմիան թողարկեց իր 3-րդ շրջանավարտ խումբը: Բոլոր 12 շրջանավարտներն արդեն աշխատում են Հայաստանի տարբեր գինեգործական ընկերություններում: Նրանցից երկուսն իրենց սեփական արտադրությունն են սկսել:

Շնորհիվ Իտալիայի Տուշայի համալսարանի հետ կնքված հուշագրի՝ Էրասմուս+ ծրագրի շրջանակում 2 ուսանող մեկնել է Իտալիա՝ 5 ամիս ժամկետով վերա-պատրաստման, ևս 4 ուսանող մեկնել է Գերմանիայի Գայզենհայմի համալսարան:

2018թ. հոկտեմբերին Ի-Վի-Էնը հայտարարեց 5-րդ ընդունելությունը: Ներկայացված փաստաթղթերի և հարցազրույցի հիման վրա 20 դիմորդից ծրագրում ընդգրկվեցին 16-ը, որոնցից 5-ը՝ փորձաշրջանով: «Գինեգործության ներածություն» և «Ներածական քիմիա» նախապատրաստական առարկաների արդյունքների ամփոփումից պարզ դարձավ, որ 2019թ. 14 ուսանող կշարունակի ուսումնառությունը Ի-Վի-Էն գինու ակադեմիայում:

«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2018թ.-ի հունվարի դրությամբ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում սովորել է 25 մագիստրանտ, որից 18-ը՝ գերմանալեզու, 6-ը՝ հայալեզու կուրսերում, 1 մագիստրանտի տրամադրվել է գործուղում: 2018թ.-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պրակտիկա անցնելու և ուսանելու կապակցությամբ ծրագրի 16 մագիստրանտի ուսման գործընթացը դադարեցվել է:

2018թ. սահմանված ժամանակացույցի համաձայն 9 մագիստրանտներ հրապարակայնորեն պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները:

Միջազգային և միջբուհական գործակցային ծրագրերի շրջանակներում 01.10.2018թ.-ից ԱՄՋ-ի լավագույն մագիստրանտներից 4-ը ուսումը շարունակում է Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում:

2018թ. գերմաներեն լեզվի նախնական դասընթացներին մասնակցելու հայտ է ներկայացրել 16 ուսանող, սակայն մասնակցել է միայն 5-ը:

2018թ. ԱՄՋ ծրագրի առաջին կուրս է ընդունվել 8 մագիստրանտ, որից 4-ը՝ անվճար համակարգ, 5 ուսանող գերմանալեզու և 3–ը՝ հայալեզու խմբերում:

2018թ. նախորդ տարվա համեմատ ուսանողների թիվը կիսով չափ քիչ է եղել, ինչը գլխավորապես պայմանավորված է գերմաներեն լեզվի հաղթահարման վախով:

2016թ. ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագիրը ACQUIN հավատարմագրող կազմակերպության կողմից ստացավ միջազգային հավատարմագրում, որի շնորհիվ 2017թ. սկսած ՎԿԳՀ-ն և ՀԱԱՀ-ն միաժամանակ ավարտած մագիստրոսները ստանում են կրկնակի դիպլոմներ՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի: 2018թ. կրկնակի դիպլոմներ են շնորհվել 5 մագիստրոսի:

ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի 2017/2018 ուսումնական տարվա գրեթե բոլոր շրջանավարտները աշխատանքի են անցել ՀՀ և ԳԴ տնտեսության տարբեր բնագավառներում՝ բանկերում, նախարարություններում, կապի և տեղեկատվության ոլորտում, ագրոբիզնեսի ոլորտում, խորհրդատվական կազմակերպություններում և Գերմանիայի խաղողագործական ու խոզաբուծական տնտեսություններում:

«ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑ

«Ջերմատնային մշակաբույսերի արտադրություն և կառավարում» դասընթացի նպատակն է պատրաստել փակ գրունտում մշակաբույսերի արտադրության ժամանակակից պահանջներին բավարարող, ինչպես նաև շուկայի և կառավարման հիմունքներին ծանոթ մասնագետ-գյուղատնտեսներ: Դասընթացը սկսելու համար հիմք է հանդիսացել Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) իրականացրած համատեղ հետազոտությունը, որը վերհանեց երկրում փակ գրունտի տեխնոլոգիաների ժամանակակից գիտելիքներով զինված մասնագետների խիստ կարիքը:

Ութ ամիս տևողությամբ այս դասընթացը հնարավորություն է տալիս ձեռք բերել գործնական գիտելիքներ և հմտություններ ջերմատնային մշակաբույսերի արտադրության վերաբերյալ՝ սկսած ջերմատնային մշակաբույսերի մշակությունից մինչև ջերմատների բիզնես պլանավորում:

Դասընթացի 1-ին փուլին դիմել է 45 դիմորդ, հարցազրույցների փուլից հետո ընդունվել է 19-ը, որոնցից դասընթացը հաջողությամբ ավարտել է 17-ը: Հատկանշական է, որ դասընթացի բոլոր շրջանավարտներն աշխատում են գյուղատնտեսության ոլորտում (ագրարային կրթություն, ջերմատներ, բաց գրունտի մշակություն, գյուղատնտեսական խորհրդատվություն):

Դասընթացի շրջանակում դասավանդել է ոլորտում աշխատանքի գործնական փորձ ունեցող 9 մասնագետ ՀՀ-ից և երկու հրավիրյալ դասախոս Հոլանդիայից: Պրակտիկաների անցկացման համար ընտրվել է 11 ջերմատուն: Առանձին 4 այցելություն է կազմակերպվել և՛ հիդրոպոնիկ և՛ գրունտային ջերմատներ:

Դասընթացի 2 ուսանող 2019թ.-ին վերապատրաստվելու է Հոլանդիայի Վախենինգենի համալսարանում:

Հաշվի առնելով ջերմատնային ոլորտի մասնագետների աճող պահանջարկը, ուսանողների դրական արձագանքները, ջերմատների՝ գործակցելու մեծ պատրաստակամությունը, դասավանդող մասնագետների պատրաստակամությունը և հետաքրքրությունը դասընթացը կրկնելու հարցում՝ 2019 թ. կանցկացվի դասընթացի 2-րդ փուլը:

«ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՀԱՎԱՍՏԱԳՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2018թ. հունվարին ԱՄՆ ՄԶԳ-ի և ԻՆՈՎԵՅԹ Հայաստան նախագծի աջակցությամբ Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամը Փենսիլվանիայի նահանգային և Վիրջինիա Թեք համալսարանների հետ համատեղ իրականացրել է «Սննդի անվտանգության համակարգերի կառավարում» մեկամսյա ինտենսիվ կրթական ծրագիրը: Դասընթացի նպատակն էր միջազգայնորեն մրցունակ կրթական ծրագրի միջոցով ուսանողներին նախապատրաստել սննդի անվտանգության ոլորտում Հայաստանում առկա մարտահրավերների հաղթահարմանը:

Ծրագրին մասնակցել են Ագրոբիզնեսի դեպարտամենտի բակալավրիատի չորրորդ ավարտական կուրսի ուսանողները: Դասընթացը ներառել է «Սննդագիտության ներածություն», «Սանիտարիա և սննդի միկրոկենսաբանություն», «Վերամշակման վերահսկողություն և թթվեցված սննդամթերք», «HACCP համակարգ» և «Սննդի պաշտպանություն» մոդուլները և ուղեկցվել է գործնական պարապմունքներով ու վերամշակող ընկերություններ ուսումնաճանաչողական այցելություններով: Դասընթացին իր մասնագիտական ներդրումն ունեցավ նաև Փենսիլվանիայի նահանգային համալսարանի սննդագիտության պրոֆեսոր, սննդի անվտանգության և որակի ծրագրի տնօրենի տեղակալ Քեթրին Քաթերը:

Ծրագրի ավարտին «Սննդի անվտանգության համակարգերի կառավարում» կրթական ծրագրի շրջանավարտները ստացան Փենսիլվանիայի նահանգային համալսարանի և Վիրջինիայի տեխնոլոգիական համալսարանի հավաստագրեր:

«ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՀԵՌԱՀԱՐ ԶՈՆԴԱՎՈՐՈՒՄ» ՀԱՎԱՍՏԱԳՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2018թ. նոյեմբերին մեկնարկեց «Աշխարհատեղեկատվական համակարգեր և հեռահար զոնդավորում» 10-շաբաթյա հավաստագրային ծրագիրը, որի 18 մասնակիցներն ընտրվել են մրցակցային հիմունքներով:

Ծրագիրն իրականացվում է ՀԱԱՀ-ի և Տեխասի A&M համալսարանի Էկոհամակարգի գիտության և կառավարման դեպարտամենտի հետ համատեղ և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ: Ծրագրում ներառված են «Աշխարհատեղեկատվական համակարգեր», «Հեռահար զոնդավորում», «Անօդաչու թռչող համակարգեր» և «Գլոբալ տեղորոշման համակարգեր» մոդուլները, որոնք դասավանդում են Տեխասի A&M համալսարանից հրավիրված դասախոսներ:

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱԱՀ Որակի գնահատման և ապահովման (ՈԳԱ) նորաստեղծ կենտրոնի առաջնային խնդիրն է գնահատել համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացների և դրանց իրականացման մեխանիզմների կիրառման արդյունավետության բարձրացումը, ոլորտի անհրաժեշտ փաստաթղթային հենքի ապահովումն ու մշտադիտարկումը:

Ուսումնասիրությունների միջոցով պարզվեց, որ համալսարանում որակի ապահովման գործընթացներն արդյունավետ չեն կազմակերպվել, մասնավորապես՝ ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունն այդ գործընթացներում կամ շատ ցածր է եղել, կամ բացակայել է, կամ էլ կրել է ձևական բնույթ, քանի որ իրականացված գործառույթների արդյունքում համալսարանում տեսանելի բարելավումներ չեն արձանագրվել:

Չնայած այն հանգամանքին, որ համալսարանը 4 տարի ժամկետով ստացել էր հաստատութենական հավատարմագրում, և 2015-2017 թթ. իրականացվել են փորձագիտական խմբի դիտողություններին և առաջարկություններին համապատասխան հաստատութենական կարողությունների շարունակական բարելավում, ՀԱԱՀ որակի ապահովման ներքին համակարգը դեռևս կայացման փուլում է և այս ոլորտում առկա են շատ խնդիրներ: Համալսարանում չեն նշմարվում այնպիսի փոփոխություններ, որոնք հիմք կտային եզրակացնելու, որ բուհում որակի մշակույթն արդեն իրականություն է: Որակի ապահովման գործընթացներ իրականացնելու խնդիրն առ այսօր դիտվում է ավելի շատ որպես արտաքին պահանջ, քան բուհում որակի ապահովման մշակույթի կայացման անհրաժեշտություն: Ուստի այսօրվա հրամայականն է վերանայել համալսարանի որակի ապահովման փաստաթղթային հենքը, որակի ներքին ապահովման մեխանիզմները և գործիքները՝ նպաստելով համալսարանում որակի ապահովման մշակույթի արմատավորմանն ու տարածմանը:

Օրինակ՝ համալսարանում առ այսօր դասավանդման ընթացքի վերաբերյալ դասախոս-ուսանող հետադարձ կապը կրել է ձևական բնույթ, քանի որ կիրառված գործիքի վերլուծության մեթոդաբանությունը սխալ է ընտրվել: Որպես արդյունք՝ դասավանդողին իրական տեղեկություն չի հասել դասավանդման ընթացքում ուսանողի տեսանկյունից առկա թերացումների վերաբերյալ: Թերևս դա էր պատճառը, որ դասախոսական անձնակազմի գնահատման գործուն համակարգի ներդրման նպատակով ՈԳԱ կենտրոնը կիրառեց Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի փորձը: Հարցման արդյունքները յուրաքանչյուր ցուցչի միջինացված գնահատականի տեսքով կուղղորդեն դասախոսներին ինքնակատարելագործման գործում:

Մեկ այլ օրինակ՝ համալսարանում վերջին տարիներին մշակվել են մասնագիտության կրթական ծրագրեր (ՄԿԾ) և առարկայական ծրագրեր՝ ըստ վերջնարդյունքների: Սակայն իրականում այդ ամենը մնացել է թղթի վրա, քանի որ դասընթացների գերակշռող մասի դասավանդման մեթոդաբանությունը և գնահատման մեթոդները ստուգելի և չափելի չեն դարձնում սահմանված վերջնարդյունքները: Այդ նպատակով կենտրոնն առաջիկայում կիրականացնի առկա ՄԿԾ-ների ներքին գնահատում՝ պարզելու, թե որքանով են ՄԿԾ-ների վերջնարդյունքները համապատասխանում Որակավորումների ազգային շրջանակին, դասընթացների

վերջնարդյունքները՝ ՄԿԾ-ին, դասավանդման և ուսումնառության ու գնահատման մեթոդները՝ վերջնարդյունքներին:

Այս առումով, հիմք ընդունելով նաև ՀԱԱՀ-ի միջազգային կրթական ծրագրերի լավագույն փորձը և գործելակերպը, կենտրոնի նպատակն է աջակցել պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին բարելավել դասավանդվող առարկայական ծրագրերը՝ ձգտելով ապահովել ակնկալվող վերջնարդյունքների համապատասխանությունը ՄԿԾ, ՈԱՇ և մասնագիտական աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաև ապահովել ուսանողակենտրոն ուսուցում, խրախուսել թիմային աշխատանքը և սոցիալական պատասխանատվությունը:

Շուկայում կայուն պահանջարկ և ճկունություն ապահովելու համար անհրաժեշտ է համալսարանի մասնագիտությունների կրթական ծրագրերի ղեկավարների հետ համատեղ պլանավորել կրթական ծրագրերի խոշորացում, առկա մասնա-գիտությունների լավարկում և արդիականացում: Մասնագիտությունները ենթարկել միջազգային հենանշման (բենչմարկինգի)՝ հայտնի համալսարանների համապատաս-խան մասնագիտությունների հետ: Այսուհետ, որպես մշակույթ, ՄԿԾ-ների որակի գնահատման չափանիշ պետք է համարվի նաև ուսանողին հաջողության հասցնելու գաղափարը, քանի որ ուսանողի հաջողությամբ է պայմանավորված համալսարանի հարակայուն հաջողությունը:

Կենտրոնի առաջնային խնդիրներից են նաև համալսարանի գործընթացների չափելիության և հաշվետվողականության ապահովման գործիքների մշակումը և կիրառումը: Սակայն 2018-2022 թթ. ռազմավարական ծրագիրը, պլան-ժամանակա-ցույցը և գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ) լրամշակման կարիք ունեն, քանի որ բացակայում են կատարողականի քանակական և որակական պլանավորվող ցուցիչները, որն անհնարին է դարձնում ռազմավարական պլանով նախատեսված նպատակների և խնդիրների իրականացման արդյունավետության գնահատումը, ուստի նաև՝ հաշվետվողականությունը: Այս տեսակետից հույժ կարևոր է աջակցել համալսարանի բոլոր ստորաբաժանումներին՝ մշակելու իրենց գործունեության եռամսյակային և տարեկան պլաններն՝ ուղղված ռազմավարական պլանի նպատակների իրականացմանը, ինչպես նաև սահմանել դրանց գնահատման առանցքային ցուցանիշները, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները:

ՀԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համակարգում գիտահետազոտական աշխատանքները գլխավորապես իրականացվել են 3 գիտական կենտրոն մասնաճյուղերի, 2 գիտահետազոտական ինստիտուտների, 6 հետազոտական կենտրոնների և կենսաբանական հետազոտությունների լաբորատորիայի միջոցով: 2018թ. իրականացված հիմնական աշխատանքների ամփոփ արդյունքներն, ըստ գիտական կազմակերպությունների և ստորաբաժանումների, ներկայացվում են ստորև:

ԱԳՐՈԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Գիտական կենտրոն մասնաճյուղի հաստիքների թիվը՝ 20:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը՝ 24764,4 հազ. դրամ:

Գիտական կենտրոնն աշխատանքներն իրականացրել է երկու ուղղությամբ:

1. Կենսատեխնոլոգիական մեթոդներով մշակաբույսերի բազմացում

- Կարտոֆիլի ավելի քան 5 սորտերի համար մշակվել են թերմոթերապիայի, էքսպլանտների ախտահանման, ռեգեներացիայի, միկրոբազմացման, միկրոպալարագոյացման, ադապտացման, մինիպալարների արտադրման արդյունավետ տեխնոլոգիաներ: Կատարվել է կարտոֆիլի վիրուսների ախտորոշում (ԻՖԱ-ELASA test):
- 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Ստեփանավանի փորձարարական տնտեսությունում տնկվել է կարտոֆիլի շուրջ 2500 պալար: Արտադրվել է շուրջ 18000 պալար:
- Հոկտեմբերին ջերմատանը (Էջմիածին) տնկվել է կարտոֆիլի 5 սորտ՝ 500 միկրոբուսակ, բերքահավաքը կատարվել է դեկտեմբերի վերջին, արտադրվել է շուրջ 3800 մինիպալար, որը կվերարտադրվի 2019թ-ին:
- Մշակվել են միկրոբազմացման տեխնոլոգիաներ խաղողի տեղական Երասխենի և Հաղթանակ քույր սորտերի համար: In vitro եղանակով բազմացվել Է խաղողի իտալական երեք սորտ (Լեոնարդո, ՍակրաՆեռա, Նարինսե):
- Գիտական հետաքրքրություն ներկայացնող խաղողի տեղաբնիկ Մորմոր սորտի մեկ մուտացված բույս ենթարկվել է միկրոբազմացման: Խաղողի Չարենցի, Վարդագույն Երևանի սորտերի համար մշակվել են in vitro բույսերի՝ ադապտացման տեխնոլոգիաներ:
- Դեկորատիվ երկու ծառատեսակների համար մշակվել են ռեգեներացիայի և միկրոբազմացման տեխնոլոգիաներ: Մշակվել են լիզիանտուսի (Lisianthus) հիբրիդային երկու սորտերի, սենյակային մանուշակի, մեխակի, ֆիզալիսի մեկական սորտերի միկրոբազմացման և ադապտացման տեխնոլոգիաներ:

2. Մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենբանկ

- 2017թ. ՀՀ տարբեր մարզերից հավաքած գյուղատնտեսական բույսերի վայրի ազգակիցների տարբեր տեսակների 70 նմուշ դրվել է Ex situ երկարատև պահպանության: Կատարվել է փաստաթղթավորում, տվյալները մուտքագրվել ICARDA –ի ձևաչափով: Պատրաստվել է 50 հերբարիում:
- Ցորենի տեղական երեք հինավուրց սորտ վերարտադրվել են դաշտային պայմաններում:

- Իրականացվել է երեք գիտարշավ, որոնից մեկը Նիդերլանդների Թագավորության «Ռայք Ցվան» կազմակերպության ներկայացուցչի հետ համատեղ՝ Հայաստանի բանջարանոցային մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների, մասնավորապես՝ վայրի գազարի (D. carota), կաթնուկի (L. seriola), եղերդակի (Cichorium L.), ճակնդեղի համակեցությունների ուսումնասիրման նպատակով: In vitro եղանակով ռեգեներացվել է վայրի ճակնդեղի մեկ տեսակ:
- In vitro պահպանվող մշակաբույսերի (կարտոֆիլ, խաղող, անփուշ մոշ, ելակ, շուշան, քրիզանթեմ, մեղրախոտ, ունաբ, գաճաճ ֆիկուս, միրտ, սենյակային մանուշակ, մեխակ և այլն) 250 նմուշներ վերակտրոնավորվել են և կրկին դրվել պահպանության:
- Տավուշի (Բերդի տարածաշրջան) Վերին Կարմիրաղբյուր համայնքի տարածքում 2018թ. հայտնաբերվել է հացազգիներից այծակնի (Aegilops tauschii և Aegilops cylindrica-ի) ևս երկու աճելավայր:
- 2018թ. հոկտեմբերից իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմա 18T-4D083 «Խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրություն կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ»: Ծրագրի շրջանակում 2018 թ. ռեգեներացվել է խաղողի երկու ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալ:

Գիտական հրապարակումների ընդհանուր քանակը՝ 9, որից 4-ը՝ միջազգային հանդեսներում: Գիտաժողովներին ներկայացված զեկույցների ընդհանուր քանակը՝ 6:

ԽԱՂՈՂԱՊՏՂԱԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Գիտական կենտրոն մասնաճյուղի հաստիքների թիվը՝ 32,5 և 6 սեզոնային:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը՝ 37608, 0 հազ. դրամ:

Հետազոտությունները իրականացվել են խաղողագործության, պտղաբուծության և գինեգործության ուղղությամբ:

1. Խաղողագործություն

- Խաղողի կոլեկցիոն (ամպելոգրաֆիական) այգիների համալրման նպատակով խաղողի սորտերի, կլոնների, վայրի ձևերի ապրոբացիոն և կլոնային սելեկցիոն աշխատանքներ են իրականացվել ՀՀ խաղողագործական բոլոր գոտիներում:
- Հայտնաբերվել են անհետացման եզրին գտնվող, անհետացած համարվող և դեռևս չնկարագրված տեղաբնակ բազմաթիվ սորտեր, ինչպես նաև վայրի ու վայրիացած ձևեր: Հայտնաբերվել է շուրջ 160 բույս:
- Աշնանը և մասամբ ձմռանը իրականացվել են հայտնաբերված սորտերի, կլոնների, վայրի և վայրիացած ձևերի վազերից կտրոնների մթերման աշխատանքներ: Մթերված կտրոնները խրձավորվել են, պիտակավորվել և դրվել պահպանման:
- 2018թ. աշնանը մթերվել է մոտ 15000 հատ ֆիլոքսերադիմացկուն սորտ-պատվաստակալների կտրոններ՝ 2019թ. գարնանը պատվաստի աշխատանքներ իրականացնելու նպատակով:

2. Պտղաբուծություն

- Հայտնաբերվել է անհետացած համարվող ծիրանենու երկու սորտ: Ուսումնասիրություններ են իրականացվել ծիրանենու դեռևս չնկարագրված 4 սորտերի նկատմամբ:

- Արարատյան դաշտավայրում ֆենոլոգիական դիտարկումներ, մասնավորապես՝ ֆենոլոգիական փուլերի ընթացքի ուսումնասիրություն է իրականացվել ծիրանենու և սալորենու համապատասխանաբար 22 և 15 սորտերի նկատմամբ: Կատարվել են տանձենու սորտերի թարմ պտուղների քիմիական անալիզներ:

3. **Գինեգործություն**

- Միկրոգինեգործության մեթոդով ուսումնասիրություններ են իրականացվել խաղողի տեղաբնիկ և սելեկցիոն տեխնիկական մի շարք սորտերի և էլիտային ձևերի գինենյութերի (մասնավորապես սեղանի, կիսաքաղցր և աղանդերային) որակների պարզաբանման ուղղությամբ: Ընդգրկված են եղել 5 սորտեր և երկու էլիտային ձևեր:

Շարունակվել են թունդ խմիչքների վերաբերյալ հետազոտությունները՝ ուղղված նոր տեխնոլոգիաների մշակմանը, կատարելագործմանը և արդիականացմանը:

Հրապարակվել է ութ հոդված, մեկ գործնական ձեռնարկ, իսկ երկու հոդված գտնվում է տպագրության ընթացքում: Հոդվածներից յոթը հրապարակվել են արտերկրի պարբերականներում: Մասնաճյուղի աշխատակիցները մասնակցել են 5 միջազգային գիտաժողովի:

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎ. ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԳՐՈՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՄԵԼԻՈՐԱՑԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Գիտական կենտրոն մասնաճյուղի հաստիքների թիվը՝ 77,5 և 15 սեզոնային:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը՝ 89417,0 հազ. դրամ:

Գիտական կենտրոն մասնաճյուղում կատարվել են հետևյալ հետազոտությունները.

- Ուսումնասիրվել են Հայաստանում ցեմենտի և պղնձի արտադրությունների թափոնների օգտագործման հնարավորությունները Արարատյան հարթավայրի աղուտ-ալկալի հողերի քիմիական մելիորացման բնագավառում*:
- Մշակվել է թորման եղանակով արտադրական հոսքաջրերի մաքրման էներգախնայողական նոր համակարգ (հայ-ռուսական կիրառական հետազոտությունների համատեղ ծրագիր)*:
- Մշակվել է օղու, կոնյակի գործարանների գինու թորման թափոնների՝ գյուղատնտեսության մեջ օգտագործման համալիր բնապահպանական համակարգ (ընթանում են ներդրման աշխատանքներ)*:
- Ներկայացվել են կլիմայի փոփոխության մասին չորրորդ ազգային հաղորդագրության ուսումնասիրությունները ՀՀ հողային պաշարների վերաբերյալ:
- Իրականացվել է «Սննդային (պարենային) անվտանգություն և մարդկային կապիտալը հողագիտությունում» ուսումնասիրություն Համաշխարհային բանկի, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO), Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հետ համատեղ:
- Ուսումնասիրվել են գերխոնավ հողերի տարածքում գրունտային ջրերի իջեցման արեալները և կազմվել համապատասխան քարտոգրամներ (Էջմիածնի և Մասիսի տարածաշրջաններում), որոնց հիման վրա կփոփոխվեն ոռոգման ռեժիմները:
- Ուսումնասիրվել են հողերի որակական գնահատման (բոնիտման) և հողերի տնտեսական գնահատման սկզբունքներն ու մեթոդները, որոնց հիման վրա կազմվել է «Հայաստանի գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման մեթոդիկա» ձեռնարկը:

- Պայմանագրային հիմունքներով (Արմավիրի մարզի Կողբավան, Առատաշեն համայնքներ) լաբորատոր օգնություն է ցուցաբերվել հողային հետազոտությունների ուղղությամբ, ներկայացվել են առաջարկություններ հողերի բարելավման վերաբերյալ:
- Գիտական կենտրոնի լաբորատորիաներում հետազոտական և արտադրական նպատակներով կատարվել են հողանմուշների 4476 քիմիական անալիզ:
- Ուսումնասիրություններ են կատարվել օրգանական և հանքային պարարտանյութերի կիրառման համեմատական արդյունավետության գնահատման նպատակով: Որպես օրգանական պարարտանյութ կիրառվել է «Բայկալ ԷՄ-1» պրեպարատով պարարտացված կոմպոստը*:
- Ուսումնասիրություններ են կատարվել «Կոմպլեքսոն» համալիր պարարտանյութի բաղադրության և ֆիզիկական հատկությունների բարելավման ուղղությամբ*:
- Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատանքի առնչությամբ որոշվել է հողերի աղտոտվածության աստիճանը, աղտոտող տարրերը, դրանց միգրացիոն տարածման ուղղվածություն ըստ քամու ուղղության, բուսական ծածկույթի, հողակտորի և այլն: Մշակվել են միջոցառումներ դրանց վնասակար ազդեցությունը մեղմելու նպատակով:
- Ուսումնասիրվել է Որոտան-Գորիս դիատոմիտաբեր ավազանի ֆոսֆորիտային ապարների թթվային մշակումով ստացված սուպերֆոսֆատային կոնցենտրատները որպես ֆոսֆորական պարարտանյութ կիրառելու հնարավորությունը*:
- Բուսական մնացորդների քայքայումը (հանքայնացում) արագացնելու նպատակով շարունակվել են մանրէների սելեկցիոն աշխատանքները: Առանձնացվել են բակտերիաների և բորբոսասնկերի մի շարք շտամներ, որոնց կիրառման նպատակով կատարվում են փորձարկումներ: Սելեկցիայի միջոցով ստացվել են բորբոսասնկերի, բակտերիաների և խմորասնկերի 13 ակտիվ շտամներ:
- Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում շուրջ 35 հա տարածքում իրականացվել են հակաէրոզային ագրոտեխնիկական, մարգագետնային և անտառմելիորատիվ միջոցառումներ:
- Կատարվել են դաշտային և կամերալ աշխատանքներ, որի արդյունքների հիման վրա կազմվել են 3 նոր հատակագծեր (քարտեզ), հաշվետվություն՝ գյուղատնտեսական հողատեսքերի և այլ նպատակային ու գործառնական նշանակություն ունեցող հողատարածքների առկայության վերաբերյալ, որոնք էլեկտրոնային ու թղթային տեսքով հանձնվել են պատվիրատուին: Մասնագիտական օգնություն է ցուցաբերվել Ապարան, Ալագյազ, Արագածավան, Ծաղկավան և այլ համայնքների միավորման աշխատանքներին՝ հողերի օգտագործման հեռանկարային ժամանակավոր սխեմաների կազմման ուղղությամբ:

Գիտական կենտրոնի գիտաշխատողները 2018թ. ընթացքում հրապարակել և հրապարակման են նախապատրաստել են 63 գիտական հոդված: Ստացվել է 1 արտոնագիր:

Հայաստանյան և այլ երկրների գիտաժողովներում ներկայացվել է 10 զեկույց:

Նախապաշտպանություն է անցել 1 դոկտորական և 2 թեկնածուական ատենախոսություն:

* *Ներդրման ենթակա հետազոտություններ*

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գիտահետազոտական ինստիտուտի հաստիքների թիվը՝ 14,75:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը՝ 16649,6 հազ. դրամ:

Ավտոմոբիլային փոխադրումների բաժին

«Կոմերցիոն ավտոմոբիլների վառելանյութի շահագործական ծախսի նորմավորման մեթոդիկայի կատարելագործումն ըստ փաստացի երթային ռեժիմների» թեմայով կատարված գիտահետազոտական աշխատանքների շնորհիվ լուծվել են հետևյալ հարցերը.

- ԳԱԶել մակնշի գազամոտորային միկրոավտոբուսների համար որոշվել է սեղմված գազի շահագործական ծախսը հետևյալ երթուղիներում՝ հարթավայրային լանդշաֆտի, վերելք-վայրէջքներով լանդշաֆտ, փոփոխական լանդշաֆտ,
- գնահատվել են վառելանյութի շահագործական ծախսի նորմատիվ արժեքների ռիսկերը,
- բացահայտվել է երթուղիներում միկրոավտոբուսների շարժման ռեժիմների տևողության տեսակարար քանակն ըստ մշակված դասակարգման:

Բաժինը հրապարակել է 2 հոդված:

Դաշտավարության մեքենայացման բաժին

2018թ.-ի ընթացքում գիտահետազոտական աշխատանքները հիմնականում կատարվել են կարտոֆիլի մշակության տեխնոլոգիական աշխատանքների մեքենայացման ուղղությամբ, մասնավորապես.

- կարտոֆիլատնկիչի հետ համակցվող կենսահումուսացան ապարատի մշակում,
- կարտոֆիլատնկիչի կլոր հատվածքով ձողային պարարտանյութասնուցիչ-շնեկի հաշվարկի տեսություն,
- մոտոբլոկային կարտոֆիլատնկիչի էսքիզային նախագծի մշակում և փորձնական նմուշի պատրաստման կազմակերպում,
- ֆերմերային տնտեսություններում կարտոֆիլի բերքահավաքի արդյունավետ տեխնոլոգիայի և մեքենաների համակարգի մշակում:

Մշակվել է ակոսակոճային կենսահումուսացանի նոր տեսություն, որը հնարավորություն է տալիս բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը՝ համապատասխան կառուցվածքային կարգավորումների դեպքում: Տեսական հաշվարկների հիման վրա պատրաստվել են փորձանմուշներ, որոնք փորձարկվել են Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր համայնքում: Մշակվել է նաև կարտոֆիլահան ապարատի հետ ագրեգատավորվող կոշտամանրիչ մեքենա:

Բաժնի գիտաշխատողները տպագրել են 5 հոդված, ստացվել է գյուտի 4 արտոնագիր:

Անասնապահության և կերարտադրության մեքենայացման բաժին

«Կաթնապրանքային ֆերմաների համար լիառացիոն կերախառնուրդների արտադրամասերի նախագծերի մշակում» թեմայի վերաբերյալ կատարվել են հետևյալ գիտագործնական աշխատանքները.

- Ճշտվել են մինչև 20 և 100 կովերի համար կերախառնուրդի պատրաստման արտադրամասերի կառուցվածքատեխնոլոգիական սխեմաները և մեքենասարքավորումները:
- Հաշվարկվել, նախագծվել և փորձարկվել են տարբեր կերատեսակների բունկերչափավորիչները, կոպիտ կերատեսակների 200 կգ/ժ և ճակնդեղի 400 կգ/ժ արտադրողականությամբ մանրացնող մեքենաները:
- Բաժնում կատարված ուսումնասիրություններով ավարտվել է «Օրգանական թափոնների աերոբ արագացված ֆերմենտացման փոքրաչափ տեղակայանքի մշակումը և պարամետրերի հիմնավորումը» թեմայով ատենախոսությունը:

Թեման ավարտված է, պատրաստ է ներդրման:
Հրատարակչություն է հանձնվել մեկ խմբային մենագրություն՝ 372 էջ ծավալով:
Հրատարակվել է 11 հոդված, որից 3-ը՝ արտասահմանյան պարբերականներում:

ՍՆՆԴԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գիտահետազոտական ինստիտուտի հաստիքների թիվը՝ 15,25:
ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը՝ 15724,7 հազ. դրամ:

Կենդանական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիայի բաժին

Բաժինը պարենամթերքի տեխնոլոգիայի ֆակուլտետի գիտական-ուսումնական բազան է: Բաժնում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Լաբորատորիայում պահպանվում են 200-ից ավելի կաթնաթթվային և բիֆիդոբակտերիաների առանձնացված ավանդագրված ակտիվ մանրէներ, որոնք ակտիվ վիճակում պահպանելու համար 8-10 օրը մեկ անգամ կատարվել է վերացանք և հետազոտվել են դրանց մորֆոլոգիական, կենսատեխնոլոգիական, կենսաքիմիական հատկությունները, կայունությունը ֆենոլի նկատմամբ, անտագոնիստական և սիմբիոզ հատկությունները, ինչպես նաև պրեբիոտիկների ազդեցությունը կաթնաթթվային մանրէների աճի ու զարգացման վրա: Մանրէների գենոֆոնդի հավատարմագրված նմուշներից պատրաստված մերանները տեղայնացված են տեղական հումքի հիմքի վրա, ունեն ցածր ինքնարժեք և պատրաստված մթերքը էկոլոգիապես մաքուր է:
- 2018 թ. ուսումնասիրվել են տարբեր բնակլիմայական գոտիների բուսական ծագման հումքից առանձնացված կաթնաթթվային մանրէների (lactobacillus lactis, lactobacillus casei, str.bovis), հիմնական հատկությունները. պրեբիոտիկների, լակտուլոզայի, գետնախնձորի ազդեցությունը պրոբիոտիկների աճի, զարգացման և կաթնամթերքի (մածուն, ացիդոֆիլին, պանիր) պատրաստման կենսատեխնոլոգիական գործընթացների և որակի վրա:

Կատարված գիտահետազոտական ուսումնասիրությունների հիման վրա 2018 թ. հրապարակվել է 2 գիտական հոդված:

Բուսական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիայի բաժին

Բաժինը կատարել է երկու ենթաթեմա:

1-ին ենթաթեմա՝ «Բուսական ծագման հումքատեսակների չորացումով վերամշակման նորագույն մեթոդների կիրառումով նոր արտադրատեսականու՝ պտուղբանջարեղենային չիպսերի արտադրության տեխնոլոգիայի մշակում, առանց բուսական յուղում հումքի տապակման»:

Մշակվել են բուսական հումքատեսակների կիրառմամբ սննդամթերքի նոր արտադրատեսակների տեխնոլոգիաներ, մասնավորապես՝ կատարվել է էլեկտրա-մագնիսական դաշտի հզորության և չիպսերի նախապատրաստվածքների համակցված չորացման ռեժիմների ընտրության հիմնավորում: Ինչպես ցույց են տվել բարձր հաճախականության հոսանքի դաշտի հետազոտությունները, էական են դաշտի հզորության այն արժեքները, որոնց պայմաններում պահպանվում են վերամշակվող հումքի որակական ցուցանիշները և էներգիայի ծախսերը մոտ են օպտիմալ ցուցանիշների:

2-րդ ենթաթեմա՝ «Ալյուրի այլ տեսակների և կենսաբանորեն ակտիվ հավելումների կիրառմամբ հացաբուլկեղենի և հրուշակեղենի արտադրության տեխնոլոգիաների մշակում»:

- Մշակվել են հաճարի ալյուրի կիրառման մի քանի տեխնոլոգիական եղանակներ, որոնց շնորհիվ ստացվել է բարձորակ մթերք: Մշակված տեխնոլոգիաներից մեկը ստացել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Մտավոր սեփականության գործակալության գյուտի արտոնագիր (Հաց արտոնագիր N3189A, 18.06.2018թ.):
- Հետազոտվել է նռան քուսպի և յուղի ազդեցությունը ցորենի ալյուրի սոսնձանյութի որակական և քանակական հատկությունների վրա: Այս երկու հումքատեսակներով մշակվել են ցորենի հացի նոր արտադրատեսակների պատրաստման տեխնո-լոգիաներ: Մշակվել է օպտիմալ տեխնոլոգիա և արդյունքները հրապարակվել են:
- Մշակվել է նոր կենսաբանական ակտիվ հավելում, որն ունի բացառապես բուսական ծագում և որի օգտագործումը հացի բաղադրագրի մեջ անվտանգ և բնական եղանակով ավելացրել է արտադրատեսակի սննդային արժեքը: Հետազոտության արդյունքները ներկայացվել են 2018թ. սեպտեմբերի 20-26-ը Հռոմի տնտեսա-գիտական համալսարանում (Roma Tre Economia Aziendale) կայացած գիտաժողովում:

Բաժնի գիտաշխատողները հրապարակել են 3 հոդված և գիտաժողովներում ներկայացել 2 զեկույց:

Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժին

Գիտահետազոտական աշխատանքները կատարվել են երեք հիմնական ուղղություններով՝

- ոչխարների աղիքային լակտոբակտերիաների հատկությունների ուսումնասիրու-թյուն,
- պրոբիոտիկների ֆիզիկաֆիզիոլոգիական առանձնահատկությունների վրա Էլեկտրոնային փնջի ճառագայթումների ազդեցության ուսումնասիրություն,
- ռադիոպրոտեկտիվ հատկություններով պրոբիոտիկների փորձնական արտա-դրության կազմակերպում:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքները վկայում են, որ՝

- ոչխարների արյան տրանսֆերինի և ալբումինի գենոտիպերի և կենդանիների աղիքային բակտերիաների էպիգենետիկ հատկությունների միջև գոյություն ունի փոխկապակցվածություն,
- «Նարինե»-ի (Vitamax-E, Armenia) և Lacto G (LG) (GM Pharmaceuticals, Georgia) համեմատությամբ կաթնաթթվային պրոբիոտիկների նոր անջատված պրոբիոտիկային բակտերիաներն ունեն նաև ռադիոպաշտպանիչ հատկություն,
- նոր պրոբիոտիկների կայունությունը 50-150GY էլեկտրոնային փնջի ճառագայթումների նկատմամբ հնարավորություն է տալիս պրոբիոտիկներն արդյունավետորեն օգտագործել սննդամթերքի փաթեթավորման գործընթացներում:
- Որպես գիտահետազոտական աշխատանքների արդյունք՝ վավերացվել հիմնավորվել են սալմոնելոզի, իերսինիոզի, էխինակոկոզի, տոքսոպլազմոզի ախտորոշման գենետիկական մեթոդները:

Գրախոսվող ամսագրերում տպագրվել է 8 հոդված (այդ թվում՝ 2,34; 3,7 և 5,5 ազդեցության գործակցով միջազգային ամսագրերում):

Բաժնի աշխատակիցները մասնակցել են միջազգային 5 գիտաժողովի, 1 միջազգային դրամաշնորհային ծրագրի (Միջազգային գիտատեխնիկական կենտրոն՝ www.istc.int; A-2134/):

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաստիքների քանակը՝ 4,75:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը՝ 5477,8 հազ. դրամ:

2018թ. կենտրոնում իրականացվել է «ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի իրացման, մրցունակության բարձրացման կառուցակարգերի կատարելագործումը և արտահանման ընդլայնման ուղիները» թեման: Կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Բացահայտվել են գյուղատնտեսական հիմնական արտադրատեսակների իրացման արժեշղթաներում տեղ գտած խնդիրները, դրանց ներազդեցության ձևն ու բնույթը:
- Ըստ գյուղ մթերքի իրացման վիճակը բնութագրող ցուցանիշների, բաշխման հիմնական ուղիների՝ գյուղատնտեսական արտադրատեսակների գների և իրացման ծավալների վիճակագրական հետազոտության միջոցով գնահատվել են առկա խնդիրները առաջարկվել լուծումներ:
- Գյուղատնտեսական արտադրատեսակների արտահանման խթանման քաղաքականության տեսանկյունից գնահատվել են հավանական գործիքակազմերի համեմատական առավելությունները:
- Առաջարկվել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման կազմակերպման միջազգային փորձի տեղայնացման հնարավորություններ:
- Բացահայտվել են ՀՀ ներքին շուկայում գյուղատնտեսական արտադրանքների իրացման, բաշխման մեխանիզմների կատարելագործման հնարավորությունները:

- Մշակվել են գյուղատնտեսական արտադրանքի արտահանման խթանման կառուցակարգերի, ռազմավարության միջոցառումներն ու քայլերը:
- Ներկայացվել են ԵԱՏՄ միասնական շուկայում գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և իրացման միջպետական կոոպերացիոն միավորումների ոլորտների ու ձևերի, միջպետական միավորումների ձևավորման դեպքում Հայաստանի՝ որպես արտադրող և արտահանող երկրի հիմնական գործառույթներն ու գործառութային մոդելը:
- Մշակվել են առաջարկություններ Երևանի մեծածախ շուկայի ենթակառուցվածքների ձևավորման և զարգացման մոդելի, գյուղատնտեսական արտադրանքի բաշխման մեծածախ կենտրոնների ձևավորման ուղղությամբ:

Կենտրոնի գիտաշխատողները հրապարակել են 6 գիտական հոդված, ներկայացրել զեկույցներ 3 գիտաժողովներում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ, ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաստիքների քանակը՝ 6,25:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը՝ 6474,8 հազ. դրամ:

Հետազոտական կենտրոնում աշխատանքները իրականացվել են հետևյալ ուղղություններով.

1. **Տավարաբուծություն՝ տավարի մթերատու հատկությունների կատարելագործումը սինթետիկ պոպուլյացիաների ստեղծմամբ**

Տավարաբուծության բարելավման արագընթաց ճանապարհը կաթնատու տիպի սինթետիկ պոպուլյացիաների ստեղծումն ու հետերոզիսի օգտագործումն է ներկրված հոլշտին, շվից, ֆլեկվի ցեղերի երինջների մաքրացեղ բուծման և միջցեղային տրամախաչման եղանակով:

Ներդրված գիտական մեթոդով կենդանիների տրամախաչմամբ ստացված սինթետիկ պոպուլյացիաներում մեկ սերնդափոխության ընթացքում կաթնատվության գենետիկական շարժը կազմում է 2000-2500 կգ: Դրական էական արդյունքները գնահատվել են՝ «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ում, «Վամաքս» ՍՊԸ-ում: Կատարվել է 98 գլուխ կովի, 60 գլուխ 18 ամսական երինջի («Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ) և 355 գլուխ տավարի, որից՝ 270 գլուխ կովի («Վամաքս» ՍՊԸ-ում) բոնիտավորում:

2. **Ոչխարաբուծություն և այծաբուծություն**

2.1. Ոչխարաբուծություն

- Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսությունում բուծվում են կորիդելի տիպի կիսանրբագեղմ մսաբրդատու ոչխարներ: 2018 թ. կատարվել է մայրական կազմի գնահատում և վերարտադրության համար ոչ պիտանի գլխաքանակի խոտանում և շիշակներով համալրում: Մսուրային շրջանի սկզբում կրկին ստուգվել է գլխաքնակը: Տվյալ տարում ծնված գառները հաշվառվել, համարակալվել, կշռվել են:
- Կազմվել է Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսությունում կորիդելի տիպի կիսանրբագեղմ տոհմային ոչխարաբուծության զարգացման սելեկցիոն պլան:
- 2018 թ. կազմվել է Հայաստանի Հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 5 պլան:

2.2. Այծաբուծություն

- Արիդ կենտրոնից բացի ՀՀ Շիրակի մարզի Կրաշեն համայնքում հիմնվում է ևս մեկ տոհմային այծաբուծական մասնավոր տնտեսություն:

Հայաստանում առաջին անգամ այս տնտեսությունում է կիրառվել այծաբուծության վարման նոր տեխնոլոգիա, որի հիմնական արդյունքներն են.

- Այծերի զուգավորումն իրականացվել է 10-12 ամսականում, որի շնորհիվ առաջին ծնի տարիքը կազմել է 16-17 ամսական (սովորական տեխնոլոգիայով առաջին ծին ստանում են 23 ամսականում), որի շնորհիվ այծամայրերի շահագործումն ավելանում է 1 ծնի շրջանով՝ համապատասխան մթերատվությամբ: Այծամայրերի մայրերի պտղատվությունը կազմել է 200 %: Ստացված սերունդը և դրանց մայրերը ունենում են նորմալ աճ ու զարգացում:
- Լակտացիայի տևողությունը 10 ամիս է: Առաջին լակտացիայում ստացված կաթի քանակը կազմել է 386 կգ (ներկայացված առաջնածին այծերը գերազանցում են տեղականներին 2,5-3 անգամ):
- Յուրաքանչյուր ամիս կատարվել են այծամայրերի և ստացված սերնդի կշռումներ, արտակազմվածքային հետազոտություններ, ստուգիչ կիթեր, զուգավորման և ծնի հաշվառումներ: Գրանցումներից հետո կատարվել է տվյալների կենսաչափական վերլուծություն, տրվել եզրակացություն:

3. Գենետիկական ուսումնասիրություն

- ՈՒսումնասիրվել են հայկական մուֆլոնի, մուֆլոն և ընտանի ոչխար տրամախաչումից ստացված հիբրիդների ալելոտիպերն ու գենոտիպերն ըստ տրանսֆերինի (Tf), ցերուլոպլազմինի (Cp), հեմոգլոբինի (Hb) լոկուսների, ինչպես նաև ոչխարների բնական դիմադրողականությունը դաբաղ հիվանդության նկատմամբ: Ստացված արդյունքները, որպես գենետիկական մարկերներ, կարելի է օգտագործել ոչխարների ընտրասերման գործընթացում:

4. Կենսաքիմիական ուսումնասիրություն

- Շարունակվել է կենսաքիմիական հետազոտությունների շարքը՝ ուղղված տարբեր գենոտիպերի այծերի արյան շրջանառվող իմունային կոմպլեքսների (ՇԻԿ) քանակական ուսումնասիրմանը տարիքային դինամիկայում՝ մետաբոլիկ առավել լարված շրջաններում՝ երեք, յոթ ամսական և 1-4 տարեկան հասակում: Ուսումնասիրվող խմբերում ներգրավված են զաանենյան, տեղական ցեղերի այծամայրերը, ինչպես նաև **F_3** և **F_4** սերնդի խառնածինները:

Հետազոտական կենտրոնը տնտեսավարողներին խորհրդատվություն է տրամադրել կենդանիների ներկրման, տնտեսությունների ստեղծման և սելեկցիոն աշխատանքների ուղղությամբ:

Հետազոտությունների արդյունքների հիման վրա հրապարակվել է 8 գիտական հոդված: Կենտրոնի աշխատողները մասնակցել են 2 գիտաժողովների:

ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաստիքների քանակը՝ 9:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը՝ 9249,8 հազ. դրամ:

Հայաստանում միակ մասնագիտացված գիտական կենտրոնն է, որը զբաղվում է գյուղատնտեսական մշակաբույսերի մոլախոտերի և սնկային հիվանդությունների դեմ պայքարի քիմիական միջոցների և աճակարգավորիչների մշակմամբ: Իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Հաշվետու տարում նպատակային սինթեզներն իրականացվել են ինչպես N,O,S-պարունակող հնգանդամանի և վեցանդամանի հետերոցիկլերի, այնպես էլ դրանց չկոնդենսված և կոնդենսված բի- և տրիցիկլիկ համակարգերի ածանցյալների շարքերում:
- Սինթեզված մոտ 260 միջանկյալ և վերջնական միացություններից լաբորատոր-վեգետացիոն փորձարկումների է ենթարկվել շուրջ 140 պրեպարատ՝ աճախթանիչ, հերբիցիդային և ֆունգիցիդային հատկությունները ուսումնասիրելու նպատակով: Դրանցից 14-ը ցուցաբերել են արտահայտված աճախթանիչ, մեկը՝ հերբիցիդային (3 կգ/հա չափաքանակով) ակտիվություն:
- Նախկինում սինթեզված 2 միացություններ, որոնք լաբորատոր պայմաններում ցուցաբերել էին բարձր աճախթանիչ ակտիվություն, ենթարկվել են դաշտային փորձարկումների: Լավագույն ցուցանիշներ են գրանցվել 25 մգ/լ կոնցենտրացիայով լուծույթների համար, որոնց դեպքում լոլիկի բերքի քանակը 14,6-15,8 %-ով գերազանցել է ստուգիչին:

Հաշվետու տարում կատարած աշխատանքների արդյունքները արտացոլված են 7 գիտական հոդվածներում, որոնցից 6-ը՝ միջազգային ռեյտինգային համակարգերի (Scopus և Web of Science) գիտական ամսագրերում (Impact Factor = 0,6-1,2):

Մինսկում և Սոֆիայում կայացած միջազգային գիտաժողովներիում կենտրոնի ներկայացրած երկու գիտական զեկույցները արժանացել են առաջին և երկրորդ կարգի դիպլոմների:

ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆՈՖՈՆԴԻ ԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաստիքների քանակը՝ 6:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը՝ 6474,8 հազ. դրամ:

«Բույսերի գենետիկական ռեսուրսների մոնիթորինգ (GIS համակարգով), պահպանում, օգտագործում, մշակաբույսերի տեղական հինավուրց սորտերի վերականգնում և նոր սորտերի բուծում» թեմայի վերաբերյալ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Իրականացվել է 8 արշավախմբային ուսումնասիրություն:
- Միջազգային համատեղ (Նորվեգիա, Բելառուս, Սլովակիա) 3 արշավախմբային ուսումնասիրությունների ընթացքում հավաքվել և ex situ պահպանության է դրվել 134 սերմային նմուշ, պատրաստվել է 227 հերբարիում:
- Երկարաժամկետ պահպանության (-18^{0}C) դրված նմուշների քանակը կազմել է 58:
- Ծլունակության վերականգնման համար վերարտադրության ենթարկված հավաքածուի նմուշների քանակը կազմել է 70:

- Հացազգիների (ցորեն, գարի), բակլազգիների (լոբի, ոլոռ) և սոխազգիների (սոխ, սխտոր) վերականգնված տեղաբնիկ, տեղական-սորտ պոպուլյացիաների քանակը կազմել է 25:
- Հետազոտական կենտրոնում ստացվել է 18 սորտ, այդ թվում՝
- սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանում գրանցված 4 սորտ,
- պետական սորտափորձարկման հանձնված 4 սորտանմուշ,
- պետական սորտափորձարկման նախապատրաստվող և բազմացման փուլում գտնվող 10 սորտանմուշ:
- Գենետիկական հետազոտությունների ենթարկված և գենետիկական քարտեզների կազմման աշխատանքներում ներգրավված ծնողական ձևերի քանակը կազմել է 54, այդ թվում՝
- տնտեսական օգտակար հատկանիշներ պայմանավորող գեների (սպիտակուցների, նուկլեինաթթուների (ԴՆԹ, ՌՆԹ) ուսումնասիրության ենթարկված նմուշներ՝ 43,
- mapQTL, mapchart, Joinmap ծրագրակազմերով (քրոմոսոմային քարտեզների ձևով) ուսումնասիրված նմուշներ՝ 14:
- Հետազոտական կենտրոնի հավաքածուից EURISCO միջազգային էլեկտրոնային կատալոգ է մուտքագրվել 157 նմուշ:

Հետազոտական կենտրոնի աշխատակիցները հրապարակել են 4 հոդված, որից 1-ը՝ միջազգային ամսագրում:

Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են 7 գիտաժողովների, որից 2-ը՝ միջազգային:

ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաստիքների քանակը՝ 4,25:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը՝ 4624,9 հազ. դրամ:

Հետազոտական կենտրոնը կատարել է հետևյալ աշխատանքները.

- Լոլիկի, տաքդեղի և կարտոֆիլի ցանքերում առաջին անգամ փորձարկվել են մթնոլորտային ազոտը ֆիքսող իրանական արտադրության Ազոտաբարվար-1 և հողի ֆոսֆորական դժվարամատչելի միացությունները բույսերի համար մատչելի դարձնող Ֆոսֆատաբարվար-2 բակտերիալ խտանյութերի, գոմաղբի, թռչնաղբի և հայ-նորվեգական համատեղ «Օրվակո» կազմակերպության կողմից արտադրվող Օրգանոմիքս, կենսահումուս օրգանական պարարտանյութերի և աճի խթանիչ կենսահեղուկի կիրառման եղանակների համեմատական ազդեցությունը նշված մշակաբույսերի բերքատվության և որակական ցուցանիշների վրա: Նշված ուսումնասիրությունները շարունակվելու են ևս 2 տարի:
- Համագործակցելով ՀՀ բնապահպանության նախարարության ծրագրերի իրականացման գրասենյակի հետ՝ 2018թ. ուսումնասիրություններ են իրականացվել Արթիկի տարածաշրջանի Վարդաքար, Հառիճ և Նահապետավան համայնքներում, քարհանքերի փոշուց և ջրհեղեղների նստվածքներից խախտված վարելահողերի, արոտների և խոտհարքների տարածքներում: Պարզվել է, որ այդ համայնքներում ագրոէկոհամակարգերի շուրջ 20,5-27,8 %-ը խորը դեգրադացված է: Մշակվել է միջոցառումների համակարգ (մակերեսային բարելավման միջոցով), որը

հաստատվել է դոնորների կողմից: Աշխատանքները կսկսվեն 2019 թ. մարտ-ապրիլ ամիսներին:

- «Խոսրովի անտառ» պետական արգելոցի և Դիլիջան ազգային պարկի հարակից համայնքների ագրոցենոզների դեգրադացված տարածքներում համայնքահեն գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպի ապահովման նպատակով ուսումնասիրվել է ՈՒրցաձոր համայնքի, Շաղափ և Լանջանիստ վարչական տարածքների, Աղավնավանք, Թեղուտ, Հաղարծին վարչական տարածքների և Լոռու մարզի Ֆիոլետովո, Մարգահովիտ համայնքների տարածքներում խախտված և առհասարակ դեգրադացված 103 հա վարելահողերի, 312 հա խոտհարքների, 967 հա արոտավայրերի վիճակը, մշակվել են բարելավման միջոցառումներ և գործողությունների կատարման տեխնիկական առաջադրանք, որոնք ներկայացվել են հաստատման՝ 2019-2021 թթ. համապատասխան համայնքներում այդ աշխատանքներն իրականացնելու ակնկալիքով:

Հետազոտական կենտրոնը հրապարակել է 5 հոդված: Գիտաժողովներում ներկայացվել է 2 զեկույց:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաստիքների քանակը՝ 12,25:

Ծրագրի բյուջեն՝ 12949,8 հազ. դրամ:

Գիտական ծրագիրը կազմված է 5 ենթաբաժինից:

- *1-ին ենթաբաժնի* նպատակն է մշակել և ներդնել գյուղատնտեսական կենդանիների մատղաշների ստրեպտակոկոզային և ստաֆիլակոկոզային հիվանդությունների ախտորոշման, բուժման և կանխարգելման արդիական միջոցներ:

Երկրի տարբեր մարզերի տավարի մանր ֆերմերային տնտեսություններում ուսումնասիրվել է հորթերի ստրեպտակոկոզային և ստաֆիլակոկոզային հիվանդությունների տարածվածությունը, դրան զուգահեռ աշխատանքներ են կատարվել նշված հիվանդությունների նկատմամբ կանխարգելիչ միջոցառումներ մշակելու ուղղությամբ (վակցինապրոֆիլակտիկա):

- *2-րդ ենթաբաժնի* նպատակն է բացահայտել գյուղատնտեսական թռչունների ինվազիոն հիվանդությունների տարածվածությունը Հայաստանի մարզերում:

Տարբեր մարզերի անհատական թռչնաբուծական տնտեսություններում ուսումնասիրվել է գյուղատնտեսական թռչունների ինվազիոն հիվանդությունների տարածվածությունը և այդ հիվանդությունների նկատմամբ առաջարկվել են բուժ-կանխարգելիչ միջոցառումներ:

- *3-րդ ենթաբաժնի* նպատակն է ձվարանի կայուն դեղին մարմնի հայտնաբերման ճանապարհով կանխարգելել և բուժել կովերի սիմպտոմատիկ անպտղությունը: Հետազոտությունները կատարվել են հետազոտական կենտրոնում և Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսությունում:

Կայուն դեղին մարմնով հիվանդ կովերի բուժման նպատակով փորձարկվել է F-2α պրոստոգլանդինը՝ 2 մլ դեղաբաժնով, իսկ բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով խորհուրդ է տրվել միաժամանակ ներարկել վիտամին E:

- *4-րդ ենթաբաժնի* նպատակն է բացահայտել տավարի նյութափոխանակության խանգարումների, մասնավորապես կետոզի առաջացման պատճառները և մշակել բուժկանխարգելիչ միջոցառումներ:

Հայաստանի տարբեր մարզերում հետազոտված 110 գլուխ կովերի 31,8 %-ի (35 գլուխ) մոտ հայտնաբերվել է ենթակլինիկական կետոզ, դրա բուժման համար կիրառվել է բուժման սխեմա, որը ներառում է գլյուկոզա 5%, E selenium և dexametazon, ինչպես նաև կերային մաթ:

Դեղորայքային ճիշտ համադրությամբ կազմակերպված բուժման շնորհիվ կլինիկալաբորատոր տվյալներում դրական արդյունք է ստացվել բուժման 10-րդ օրից սկսած: Բուժման փորձարկված սխեման առաջարկվել է ներդնել մանր ֆերմերային տնտեսություններում:

- *5-րդ ենթաբաժնի* նպատակն է Երևան քաղաքի սպառման կետերում հետազոտել մեղրի սանիտարական վիճակը և որակը:

Մեղրի սանիտարական որակի գնահատման նպատակով առաջարկվել է շուկաների անասնաբուժասանիտարական փորձաքննության լաբորատորիաներում լաբորատոր մեթոդներով ուսումնասիրել վաճառքի հանված մեղրի հետևյալ ցուցանիշները՝ ջրի զանգվածային բաժին, ծաղկափոշու առկայություն, ընդհանուր թթվություն, խմորման նշաններ, օքսիմեթիլֆուրֆուրոլի վերլուծություն:

Նշված հետազոտությունները թույլ են տալիս գնահատել մեղրի որակը և անարատությունը:

Հետազոտության արդյունքներով կենտրոնը հրապարակել է 3 հոդված: Զեկուցում է ներկայացվել մեկ գիտաժողովում:

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Հաստիքների քանակը՝ 4,5:

Ծրագրի բյուջեն՝ 6975,7 հազ. դրամ:

1. Լաբորատորիայի գիտահետազոտական աշխատանքների արդյունքները.

- Հետազոտությունների ընթացքում լոլիկի, տաքդեղի, խաղողի տեղական սորտանմուշները ներմուծվել են *in vitro* կուլտուրա, ստացվել են ռեգեներացիոն կալուս և սոմակլոնալ տարբերակներ, հետագա սելեկցիոն աշխատանքների համար կատարվել է արժեքավոր ռեգեներանտ գծերի ընտրություն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կալուսագոյացման և ռեգեներացիոն հաճախականության ցուցանիշները ֆիզիոլոգիապես երիտասարդ հյուսվածքներում ավելի բարձր են:
- Կենսատեխնոլոգիական մեթոդներով, կիրառելով մեկուսացված հյուսվածքային կուլտուրան *in vitro* պայմաններում մշակվել են տաքդեղի և լոլիկի սոմակլոնալ տարբերակների ստացման տեխնոլոգիաները: Ընտրվել են լավագույն սննդարար միջավայրերը՝

- տաքդեղի կալուսագոյացման համար՝ ՄՍ + կինետին 0,2մգ/լ + ԻՔԹ 0,4մգ/լ 42,7±0,8% հաճախականությամբ, ռեգեներացիայի համար՝ ՄՍ + ԲԱՊ 2,0մգ + կինետին 1,0 մգ + ԻՔԹ 0,05 մգ 54,7±0,1% հաճախականությամբ,
- լոլիկի կալուսագոյացման և ռեգեներացիայի համար լավագույն սննդարար միջավայրն է՝ ՄՍ + ԲԱՊ 3,0 մգ + ԻՔԹ 0,5 մգ, որոնց հաճախականության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 98,3±0,32% և 97,3±0,20 %:

- Մշակվել են տաքդեղի, լոլիկի, խաղողի և խնձորենու *in vitro* պայմաններում

գագաթնային մերիսթեմի մեթոդով առողջացված բուսական տնկանյութի զանգվածային արտադրության ստացման տեխնոլոգիաները: Ըստ փուլի և բուսատեսակի՝ մշակվել են արհեստական սննդարար միջավայրեր:

- Լոլիկի վայրի՝ *Lycopersicon pimpinellifolium* (L.), և Անահիտ-20 սորտի Ֆուզարիոզ՝ Fusarium oxysporum f. sp. Lycopersici, հիվանդությունը ախտորոշելու նպատակով կիրառվել են ԴՆԹ մարկերներ՝ օգտագործվել պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) մեթոդը:

2. Եվրասիա 2016 երկարաժամկետ ծրագիր CPEA-LT-2016/10092՝ «Գյուղատնտեսության զարգացման համար Նորվեգիա-Հայաստան համագործակցության ծրագիր բույսերի մոլեկուլային կենսաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառներում», Նորվեգական միջազգային համագործակցության կրթության կենտրոնի (SiU) ֆինանսավորմամբ:

Ծրագիրն իրականացվում է Թրոմսո քաղաքի Նորվեգիայի արկտիկական համալսարանի (UiT) և Սաերհեիմ քաղաքի Նորվեգիայի կենսատնտեսական հետազոտությունների ինստիտուտի (NIBIO) գործակցությամբ:

- Ծրագրի շրջանակում լաբորատորիայում կազմակերպվել են դասընթացներ՝ բույսերի կենսատեխնոլոգիայի և մոլեկուլային կենսաբանության վերաբերյալ:
- Իրականացվում են կենսատեխնոլոգիական և մոլեկուլային կենսաբանության մեթոդներով Հայաստանում տարածված վայրի և դրանց մշակովի բույսերի տեսակների ուսումնասիրություններ:

Լաբորատորիայի գիտաշխատողների կողմից հրապարակվել է 3 հոդված, որից 2-ը՝ միջազգային ամսագրում: Գիտաժողովներում ներկայացվել է 2 զեկույց:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Համալսարանի գիտական կազմակերպություններում ու ստորաբաժանումներում իրականացված որոշակի աշխատանքների հետ մեկտեղ առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք կուտակվել են տարիների ընթացքում: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Միջնաժամկետ հեռանկարում համալսարանի համակարգում գտնվող գիտական կազմակերպությունների՝ գիտական կենտրոնների, գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների կառուցվածքի լավարկման անհրաժեշտություն, բազային տնտեսությունների գործունեության արմատական վերանայման հրատապություն, արդյունքում արդիական փորձարարական և գործնական ուսուցման կենտրոնների ստեղծում:
- Համալսարանի գիտական կազմակերպությունների կադրային կազմի երիտասարդացում և վերապատրաստում, տեխնիկական բազաների, լաբորատորիաների վերազինում՝ այս ուղղությամբ առաջնահերթ աղբյուր դիտարկելով միջազգային դրամաշնորհային ծրագրերը:
- Ըստ գիտական հետազոտությունների արդյունքների՝ գիտաշխատողների աշխատանքի վարձատրության ավելացման իրական հնարավորությունների ստեղծում:
- Գիտահետազոտական ծրագրերի ուղղվածության վերանայում՝ նպատակ ունենալով կիրառական և ներդրումային նշանակություն ունեցող գիտական ծրագրերի առաջնահերթ իրականացումը, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող բազային և

թեմատիկ գիտական ծրագրերի հետ մեկտեղ դրամաշնորհային գիտական ծրագրերի ծավալների և ուղղությունների ընդլայնումը:

- ՀՀ պետական բյուջեի աջակցությամբ իրականացվող ծրագրերի ֆինանսական ռեսուրսների ծախսերի լավարկման անհրաժեշտություն, որի նպատակն է աշխատավարձի բացարձակ գերակշիռ տեսակարար կշռի նվազեցումը և ազատված միջոցներով հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ սարքավորումների, նյութերի ձեռք բերում, հրատարակման և գործուղումների ծախսերի ապահովումը:
- Մինչ այժմ իրականացված գիտական աշխատանքների, մշակումների ներդրման (առևտրայնացման) հնարավորությունների օգտագործում, վերջինի ուղղությամբ աշխատանքների ակտիվացում:

ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ

2018 թ. ստացվել են հետևյալ արտոնագրերը.

1. «Ակոսակոճային սերմնահան ապարատ», Շ.Մ. Գրիգորյան, Ս.Վ. Ռաֆաելյան, արտ. N3182,
2. «Թռչունների կարբոնատային կենսածին լրացակերի ստացման եղանակ», Գ.Ս. Ավագյան, Ս.Կ. Երիցյան, Լ.Ս. Երիցյան, Հ.Ե. Բաբայան, Հ.Մ. Թորոսյան, արտ.N3205:

2018 թ. ներկայացված նոր հայտերն են.

1. «Կարտոֆիլահանի ռոտորային կոշտամանրիչ», Ա.Պ. Թարվերդյան, Ս.Մ. Եսոյան, Ս.Ս. Մարիկյան, Ս.Ս. Հայրապետյան (դրական որոշում),
2. «Կարտոֆիլահանի ռոտորային կոշտամանրիչ», Ա.Պ. Թարվերդյան, Հ.Հ. Հայրապետյան, Ա.Վ. Ալթունյան,
3. «Կարտոֆիլահանի ռոտորային կոշտամանրիչ», Հ.Հ. Հայրապետյան,
4. «Կարտոֆիլահան մեքենա», Ս.Խ. Պապյան,
5. «Ավտոմոբիլի արգելակի վակուում ուժեղարարի պահուստավորման սարք», Ն.Ա. Բազիկյան, Վ.Ա. Վարդանյան, Հ.Վ. Վարդանյան:

Տրվել է 3 փորձաքննության ակտ՝ հոդվածները տպագրելու համար:

ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանի ֆոնդն առ 01.01.2019 թ. կազմում է 564117 միավոր գրականություն, որից 203381-ը՝ ուսումնական, 311316-ը՝ գիտական, 49420-ը՝ գեղարվեստական:

2018 թ. ստացվել է 3225 միավոր (393 անուն) գրականություն, որից 42 անունը (1560 միավոր) հրատարակվել է համալսարանում:

Հաշվետու տարում գրադարանը համալսարանի մասնաճյուղերին տրամադրել է 41 միավոր գրականություն:

Նոր ստացված գրականության համար կատարվել է 1200 մատենագիտական նկարագրություն: Այդ քարտերը տեղադրվել են գրադարանի այբբենական և կարգային գրացուցակներում:

Կատարվել է համալսարանի գիտաշխատողների գրած և տարբեր ամսագրերում տպագրված հոդվածների վերլուծական նկարագրություն, և քարտերը տեղադրվել են թեմատիկ քարտարաններում:

Գրադարանն ունի 3475 ընթերցող, որից 671-ը՝ համալսարանի աշխատակիցներ:

Koha գրադարանային ծրագրով գրանցված ընթերցողների թիվը կազմում է 2628: Հաշվետու ժամանակաշրջանում Koha ծրագրով սպասարկվել է 5079 միավոր գրականություն:

Գրադարակներում վերադասավորվել է 13370 միավոր գրականություն, որից 7420-ը՝ Koha ծրագրով կատարված մուտքագրման աշխատանքներից հետո:

Գրադարանի սպասարկման կետերում՝ ընթերցասրահներում, էլ. ընթերցասրահներում և սպասարկման բաժնում այցելությունների թիվը եղել է 85260:

Հաշվետու տարում սպասարկված գրականության քանակը կազմում է 24806 միավոր գրականություն, որից՝ աբոնեմենտով 11206, ընթերցասրահներով՝ 12845: 2018 թ. ընթերցասրահներում գրքերից և ամսագրերից պատճենահանվել է 500 էջ:
Միջգրադարանային բաժնույթի միջոցով սպասարկվել է 10 գիրք:

Գրապահոցներում կատարվել է ֆոնդի տեղաշարժ, ստուգվել է ֆոնդի դասավորվածությունը:

Հաշվետու տարում նշանակվել է 208 հոդվածի դասիչ:

2018 թ. էլեկտրոնային գրացուցակի ստեղծման նպատակով մուտքագրվել է 2883 անուն, 7420 միավոր գրականություն:

2007-2018 թթ. մուտքագրվել է 84857 անուն, 436020 միավոր գրականություն:

Գրադարանի կայքում առ 01.01.2019թ. կա 1120 գրքի էլեկտրոնային տարբերակ:

Գրադարանի Koha էլեկտրոնային գրացուցակում ներառված է նաև համալսարանի գիտաշխատողների 1300 գիտական հոդվածի նկարագրություն և էլեկտրոնային տարբերակ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

2018թ. ՏՏ կենտրոնն իրականացրել է ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգի, էլեկտրոնային ուսուցման, նոր կայքէջերի պատրաստման, ներքին փաստաթղթաշրջանառության, էլեկտրոնային լսարանային և գրքային ֆոնդերի ընդլայնման, ընդհանուր գրադարանային աշխատանքների ավտոմատացման և համալսարանում տեղեկատվական մի շարք այլ համակարգերի ներդրման ու զարգացման աշխատանքներ.

- ՀԱԱՀ պաշտոնական կայքի Նորություններ բաժնում լուսաբանվել է 300-ից ավելի նորություն, ինչպես նաև տեղադրվել է 86 հայտարարություն (ուսման, տեղական և միջազգային ծրագրերի հրավերներ, ծանուցումներ թափուր աշխատատեղերի վերաբերյալ) և 33 Ագրոլուր:
- Տնտեսագիտական և Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետներում պիլոտային կարգով ներդրվել է բուհի Էլեկտրոնային կառավարման ebuh համակարգը, որը, որպես մեկ միասնական ծրագիր, համալսարանի ղեկավարներին, վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմերին, ուսանողներին հնարավորություն կտա ավտոմատացված եղանակով իրականացնել հաստատության գործունեության կառավարման և կազմակերպման հիմնական գործընթացները՝ ապահովելով առավել արդյունավետ, թափանցիկ և հասանելի տեղեկատվություն բոլոր օգտատերերի համար, որոնք կարող են մուտք գործել համակարգ յուրաքանչյուր պահի և ցանկացած վայրից:

  Այժմ ավարտված են Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի բոլոր կուրսերի ուսանողական համակազմի, Տեխնոլոգիական ֆակուլտետի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողական համակազմի կարգավորումները:
- 2018թ. ավարտին հասցվեց «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակում ՀԱԱՀ-ի Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում ավարտուն տեսքի բերվեց և շահագործման հանձնվեց գինեգործության կենտրոնը: Ծրագրի շրջանակում տպագրվել է «Գինեգործական ձեռնարկությունների սարքավորումներ» դասագիրքը՝ 100 օրինակով: Հաշվետու տարում պատրաստվել է wine.anau.am կայքը, որն առցանց գրադարանի միջոցով հանրությանն է ներկայացնում Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսության գործունեությունն ու զարգացման հետագա հնարավորությունները:
- Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ում անցկացված միջոցառումները նկարահանվել, մոնտաժվել և տեղադրվել են www.youtube.com հարթակի ՀԱԱՀ ալիքում, իսկ լուսանկարները՝ www.flickr.com հարթակում:
- 2018թ. սեպտեմբեր ամսից համալսարանում իրականացվել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mulberry-2 համակարգի ներդրման աշխատանքները: Հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը կազմակերպվել են ամբողջ անձնակազմի վերապատրաստման դասընթացները, մուտքագրվել են բոլոր օգտատերերը: Վերապատրաստվողների ընդհանուր թիվը կազմում է 235 աշխատակից: Համակարգը համալսարանում գործարկվել է 2018 թ. նոյեմբերի 19-ին:

- 2018-2019 ուստարվա ընդունելության համար կենտրոնի աշխատակիցները տեսանկարահանել ու պատրաստել են բուհը ներկայացնող գովազդային հոլովակ: Ագրարայինը արտասահմանյան գործընկերներին ներկայացնելու նպատակով պատրաստվել է ՀԱԱՀ-ի մասին պատմող ամփոփ անգլերեն տեսաֆիլմ, որի հիման վրա հետագայում պատրաստվել է նաև հայերեն տարբերակը:
- Թվայնացվել և արխիվացվել են ՀԱԱՀ-ի մասին նկարահանված, համալսարանական ու գործակցային միջոցառումները լուսաբանող նյութերն ու գովազդային հոլովակները:
- 2018թ. ընթացքում Վանաձորի և Սիսիանի մասնաճյուղերի համար կենտրոնը շարունակել է կազմակերպել հեռավար ուսուցման դասընթացներ՝ մոտ 120 ժամ ծավալով:
- Կատարվել է docker համակարգի ներմուծում, որով հնարավոր է դարձել ՀԱԱՀ սերվերում առանց դժվարությունների վերադասավորել ծրագրակազմերը և նոր ծրագրակազմերի ներդրման համար օպտիմալացնել սերվերների տարածքը:
- Ներդրվել է jenkins համակարգը՝ բազմաթիվ գործողությունների ավտոմատացման և վերահսկման համակարգերի ներդրման հնարավորությամբ:
- 2018թ. վերջում ինտենսիվ աշխատանքներ են իրականացվել նաև բուհի պաշտոնական կայքի նոր տարբերակի նախագծման, դիզայներական լուծումների, ծրագրավորման, նորամուծությունների ներդրման ուղղությամբ:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են 2018թ. համալսարանի կայքէջերի այցելուների թիվն ըստ երկրների:

Աղյուսակ 5

Կայքէջերի այցելուների և էջերի դիտումների թիվը

Կայք	Այցելուների թիվը	Էջերի դիտումների քանակը
https://www.anau.am/	278 355	736 067
http://library.anau.am/	350 340	1 270 393
http://career.anau.am/	42 380	101 657
http://persons.anau.am/	9 563	66 818
Ընդհանուր	514 594	2 163 360

2018թ. բուհի պաշտոնական կայքի (https://www.anau.am) նոր այցելուների թիվը կազմել է 110271, որը նախորդ տարվա համեմատ, 32 տոկոսով ավելի է:

Աղյուսակ 6

ՀԱԱՀ կայքի այցելուների թիվն ըստ երկրների

Հ/հ	Երկիրը		Այցելությունների քանակը
1		Հայաստան	99 089
2		Ռուսաստան	4642
3		ԱՄՆ	2462
4		Վրաստան	714
5		Գերմանիա	707
6		Ֆրանսիա	562
7		Հնդկաստան	475
8		Ուկրաինա	453
9		Իրան	277
10		Ղազախստան	246

**Համալսարանի կայքի այցելուների թվին վերաբերող տվյալները վերցվել են Google Analytics՝ վեբ կայքերի վերլուծությամբ զբաղվող համակարգից:*

- 2018թ. սեպտեմբերին իրականացվել են Moodle համակարգի ծրագրային թարմացման աշխատանքներ, սերվերային հատվածի տեխնիկական վերազինում, որոնց շնորհիվ համակարգն ապահովեց միաժամանակ մեծ քանակությամբ մուտքերի հնարավորություն, անվտանգության և տեղեկատվության վերա-կանգնման գործիքակազմ:

Աշխատանքներին զուգահեռ 2,5 ամիս շարունակ ամեն օր իրականացվել են դասընթացներ, որոնց ընթացքում դասախոսները ծանոթացել են համակարգի գործիքակազմին:

Ընդհանուր առմամբ SS կենտրոնի աշխատակիցները հարթակում բացել են 2158 առարկա (բակալավրիատ՝ 1623, մագիստրատուրա՝ 234, մնացածը՝ քոլեջի և 2-րդ կիսամյակի առարկաներ): Բակալավրի կրթական աստիճանի համար բացվել են 726 դասախոսություն (մուտքագրվել է 93 տոկոսից ավելին) և 897 լաբորատոր-գործնական պարապմունքներ (մուտքագրվել է 74 տոկոսից ավելին), մուտքագրվել է 1730 ուսանողի վերաբերյալ տեղեկատվություն:

Գործընթացն առավել մատչելի դարձնելու համար SS կենտրոնը ստեղծել է նաև էլեկտրոնային ուսուցման Moodle հարթակի օգտագործման 25 էջանոց ամբողջական ուղեցույց, որը տեղադրված է հարթակում՝ բաց օգտագործման հնարավորությամբ:

SS համակարգերի սպասարկման բաժնում 2018 թ. ընթացքում վերանորոգվել են 16 տպիչ, 5 մոնիտոր, 228 համակարգիչ: Բաժինը կահավորել է 6 համակարգչային լսարան, որից 2-ը՝ ՀԱԱՀ քոլեջում: Համալսարանի 3-րդ և 4-րդ մասնաշենքերից ինտերնետային ցանցը և հեռախոսային կայանը վերատեղադրվել են 5-րդ մասնա-շենքում: Տեղափոխությունների ընթացքում ինտերնետային ցանցին է միացվել 16 նոր աշխատասենյակ: Ձեռք են բերվել լրացուցիչ պահեստամասեր, որոնցով հզորացվել են Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնից ստացված 20 համակարգիչները, որոնք հետագայում տրամադրվել են գրադարանին, քոլեջին և ամբիոններին:

Բաժինն ապահովում է ՀԱԱՀ-ում անվտանգության նպատակով տեսախցիկների սերվերի սպասարկումը:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մինչև 2018թ. դեկտեմբեր ամիսը ՀԱԱՀ ուսանողների կարիերայի զարգացման գործառույթները իրականացնում էր Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը(ԱՏԽԲ), հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ✓ գյուղատնտեսության և հարակից ոլորտներում աշխատատեղերի հնարավորությունների բացահայտում, դասակարգում և տեղեկատվության տարածում,
- ✓ խորհրդատվություն կենսագրական փաստաթղթերի և հարցազրույցների տեխնիկայի վերաբերյալ, ծանոթացում ձեռնարկությունների գործունեությանը,
- ✓ գործատուների և շրջանավարտների միջև կապերի ստեղծում, հարցազրույցների համակարգում:

2018թ. ԱՏԽԲ-ն հրատարակված էլեկտրոնային տեղեկագրի միջոցով շահառուներին տեղեկատվություն է տրամադրել ավելի քան 485 թափուր աշխատատեղի, կրթությունը շարունակելու, մասնագիտական վերապատրաստման և մասնագիտական համաժողովներին մասնակցության հնարավորությունների վերաբերյալ:

2018թ. ընթացքում ԱՏԽ բաժինը համակարգել է ՀԱԱՀ շրջանավարտների հարցազրույցները աշխատանքի տեղավորման նպատակով ՀԱԱՀ գործընկեր «Երեմյան Փրոջեքթս», «Ագրիմատկո Արմենիա» ՍՊԸ, «Գրին Ֆարմեր» ՍՊԸ, «Գրանդ Քենդի» ՀՁ ՍՊԸ, «Ագրոմաստեր» ՍՊԸ, «Ինեկոբանկ» ՓԲԸ, ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող 4, բույսերի պաշտպանության ոլորտում գործող 3 ընկերությունների հետ:

2018թ. սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել է նաև ՀԱԱՀ ՏՏ և ԻԾ կենտրոնի ծրագրավորողի, տեխնիկական աշխատակցի, համակարգային ադմինիստրատորի թափուր հաստիքների մրցույթին մասնակցող համապատասխան թեկնածուների ընտրության աշխատանքները:

2018թ. ԱՏԽԲ-ն մասնակցել է «Կրթություն և կարիերա EXPO-2018» ցուցահանդեսին՝ ներկայանալով ՀԱԱՀ-ի և Ագրոբիզնեսի դեպարտամենտի հետ միասին:

Դպրոց-բուհ գործակցության շրջանակում ԱՏԽ բաժնի աշխատակազմը մշտապես մասնակցում է Երևանի և տարբեր մարզերի բարձր դասարանցիների հետ հանդիպումներին, ներկայացնում ՀԱԱՀ-ի մասնագիտությունները, հեռանկարները, ագրոպարենային և հարակից ոլորտներում կարիերայի հնարավորությունները: 2018թ. ընթացքում Երևանի և ՀՀ մարզերի ավագ դպրոցներից ավելի քան 800 աշակերտ մասնակցել է այս հանդիպումներին:

ԱՏԽ բաժինը 2018թ. ընթացքում շարունակել է համակարգել ՀԱԱՀ շրջա-նավարտների մասին տեղեկատվության մուտքագրման աշխատանքները ԵՄ HEN-GEAR ՏԵՄՊՈՒՍ «Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների աշխատունակությանն ուղղված բարձրագույն կրթության ցանց» ծրագրի շրջանակում ներդրված էլեկտրոնային բազայում, որտեղ 2018թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ գրանցվել է ՀԱԱՀ-ի ավելի քան 3300 շրջանավարտ:

ԱՏԽԲ կարևոր գործառույթներից է աշխատանքային տոնավաճառների կազմակերպումը, որը մասնագիտական կողմնորոշման հզոր գործիք է: Տոնավաճառի ընթացքում երիտասարդներին ներկայացվում են աշխատաշուկայի առկա պահանջները, թափուր աշխատատեղերը, աշխատանքային պրակտիկայի և նոր հմտությունների ձեռք բերման հնարավորությունները:

2018թ. նոյեմբերին ԱՏԽ բաժինը մասնակցել է ԱՄՆ դեսպանության աջակցությամբ Արմենիա Մարիոթ հյուրանոցում կազմակերպված Կարիերայի և ձեռնարկատիրության տոնավաճառին, որը Ձեռնարկատիրության համաշխարհային շաբաթվան նվիրված ամփոփիչ միջոցառումն էր: Տոնավաճառին ՀԱԱՀ-ն ներկայացավ որպես գործատու ավելի քան 15 թափուր աշխատատեղերով:

Այս ամենի հետ մեկտեղ կենտրոնը չի իրականացրել շրջանավարտների մշտադիտարկում, համալսարանում բացակայում են շրջանավարտների կարիերայի զարգացման վերաբերյալ տվյալները: Վերջերս վերակազմավորված **Կարիերայի զարգացման և շարունակական կրթության** բաժնի առջև այժմ դրված է ոչ միայն շրջանավարտների զբաղվածության մակարդակի որոշման խնդիրը, այլ նաև ոլորտի գործատուների հետ գործուն կապի հաստատումը, նրանց մարդկային ռեսուրսների կառավարիչների հետ մշտական կապը, ագրոոլորտի մարդկային կապիտալի կարիքների, ագրոմասնագետների աշխատավարձերի, կարիերայի զարգացման, շրջանավարտների համար անհրաժեշտ նոր հմտությունների և մասնագիտական որակների մասին վերլուծությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2018թ. Արտաքին կապերի դեպարտամենտի (ԱԿԴ) մասնակցությամբ շարունակվել են ՀԱԱՀ-ի միջազգայնացմանն ու արտաքին կապերի ընդլայնմանն ուղղված աշխատանքները: Հաշվետու տարում կնքվել կամ վերահաստատվել են գործակցության 13 հուշագրեր և պայմանագրեր ՀՀ 2, ԱՀ 1, ԱՊՀ 6, Հնդկաստանի 1 և եվրոպական 3 ուսումնական հաստատությունների հետ:

ԷՐԱՍՄՈՒՍ+ ՀԳ1 ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2018թ. ընթացքում Էրասմուս+ միջազգային կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակում իրականացվել են տասնյակ դասավանդումներ և վերապատրաստումներ՝ համագործակցություն ծավալելով ավելի քան 25 տարբեր եվրոպական համալսարանների հետ: 2017-2018 ուստարվա ընթացքում ՀԱԱՀ-ն ունեցել է 27 Էրասմուս+ ՀԳ1 ծրագիր, որից 21-ը՝ նոր, իսկ 6-ը՝ 2016-2017 ուստարվանից: 2018 թ. ընտրության արդյունքներով ՀԱԱՀ-ն նախնական տվյալներով ունի 19 նոր Էրասմուս+ ՀԳ1 ծրագիր (ևս 15-ը շարունակվում են անցյալ տարվանից): Ընդ որում, Էրասմուս+ ծրագրերի քանակով 2017 և 2018 թթ. ՀԱԱՀ-ն երկրորդն է ՀՀ բուհերի շարքում: 2018 թ. ընթացքում իրականացվել են ուսանողների, դասախոսների և աշխատակիցների 83 փոխանակում ՀԱԱՀ-ի և եվրոպական 19 համալսարանների միջև:

Աղյուսակ 7

2018 թ.-ի գործուղումների ցանկ (ուսանողներ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Էրասմուս+ ՀԳ1	29	52
ՎԿԳՀ	9	16
MUSA & MOBIS	4	7
Նորվեգիա-Հայաստան համագործակցության ծրագիր	3	5
Praxx	7	13
Այլ (գիտաժողով, գիտական աշխատանք)	4	7
Ընդամենը	56	100

Աղյուսակ 8

2017-18 թթ. գործուղումների ցանկ (դասախոսներ և վարչական անձնակազմ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Էրասմուս+ ՀԳ1	38	46
Էրասմուս+ ՀԳ2	13	16
ՎԿԳՀ	4	5
APPEAR	5	6
ԵՄ ծրագիր	1	1
GIZ ծրագիր	2	2
Այլ (գիտաժողով, սեմինար, գործնական հանդիպումներ)	20	24
Ընդամենը	83	100

ԷՐԱՍՄՈՒՍ+ ՀԳ2 ԾՐԱԳՐԵՐ

2018 թվականին սկսվեցին հաստատութենական կարողությունների զարգացմանն ուղղված 2 նոր՝ *Էրասմուս+ հիմնական գործողություն-2 ծրագրերը:*

- *«Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ուսուցման ոլորտում»* (TOPAS) ծրագրի շրջանակում աշխատանքային և ծրագրային հարցեր քննարկելու նպատակով այցեր են կազմակերպվել Ուզբեկստան, Լեհաստան և Մեծ Բրիտանիա:
- *«Կենսաարտադրանքների տեխնոլոգիայի ոլորտում գերազանցության հայկական ցանց»* (AbioNet) ծրագրի շրջանակում ՀԱԱՀ 3 աշխատակից գործուղվել են Հունաստան՝ Սալոնիկ և Գերմանիա՝ Դրեզդենի տեխնոլոգիական համալսարան՝ մասնակցելու ծրագրի աշխատանքային հանդիպումներին:

ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ

ՀԱԱՀ ուսանողների պրակտիկան Գերմանիայում ապահովվում է գերմանական Logo, JD East, GeTech, Praxx կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերով: 2018թ. 9 ուսանող ուսումնաարտադրական պրակտիկա է անցել են Վայհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանում, իսկ 7-ն արտադրական պրակտիկա են անցել Praxx կազմակերպության հետ գործակցության շրջանակում:

2018թ. վերսկսվեց գործակցությունը Վախենինգենի համալսարանի հետ. այս համալսարանի մասնագետները 2019 թ. երկշաբաթյա վերապատրաստում կկազմակերպեն ՀԱԱՀ մասնագետների համար՝ բույսերի պաշտպանության և գենետիկական ռեսուրսների հետազոտման ուղղությամբ, որը կֆինանսավորվի NUFFIC-ի կողմից:

Եվրասիա կրթական ծրագրի (CPEA-LT-2016/10092) ֆինանսավորմամբ 2017 թվականից Նորվեգիայի Թրոմսոյի արկտիկական համալսարանի և Նորվեգիայի Կենսաէկոնոմիկայի ինստիտուտի հետ համատեղ իրականացվում է «Գյուղատնտեսական զարգացման համար Նորվեգիա-Հայաստան համագործակցության ծրագիր բույսերի մոլեկուլային կենսաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառներում» ծրագիրը: Ծրագրի շրջանակում 2018թ. կազմակերպվել են դասընթացներ «Բույսերի կենսատեխնոլոգիա», «Գիտական հաղորդակցում անգլերենով», «Անվտանգության կանոնները լաբորատորիայում», «Բույսերի գենոմային ԴՆԹ-ի անջատումը և հսկումը ագարոզային գելի վրա», «Կենսաինֆորմատիկա», «Ներկայացման հմտություններ» թեմաներով: Միաժամանակ 4 ուսանող, 2 ասպիրանտ և 1 հայցորդ Նորվեգիայում մասնակցել են հետազոտական աշխատանքների:

Appear ծրագրի շրջանակում Վիեննայի բնական ռեսուրսների (BOKU) համալսարանի օժանդակությամբ ՀԱԱՀ-ն կատարում է «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» ծրագիրը: Այս ծրագրի շրջանակում մայիսին ՀԱԱՀ 4 աշխատակից վերապատրաստվել է Ավստրիայում: 2018թ. սեպտեմբերին Հայաստան ժամանած BOKU համալսարանի 5 հոգուց բաղկացած դասախոսական թիմը իրականացրեց տասնօրյա վերապատրաստման ծրագիր օրգանական գյուղատնտեսության տարբեր թեմաներով:

Բուհերի միջազգայնացման վերաբերյալ կազմակերպված վերապատրաստումներին մասնակցել են ինչպես ԱԿԴ աշխատակիցները, այնպես էլ այլ ստորաբաժանումների 8 աշխատակից: Էրասմուս+ ծրագրի շրջանակում ՀԱԱՀ 13

աշխատակից մասնագիտական վերապատրաստում է անցել Բարսելոնայի ինքնավար, Հունաստանի Արևմտյան Ատիկայի, Իտալիայի Սապիենցա, Նիտրայի գյուղատնտեսական համալսարաններում:

Էրասմուս+ ծրագրի շրջանակում ՀԱԱՀ 9 աշխատակից դասախոսել է Շոտլանդիայի արևմտյան, Պորտուգալիայի Ավեիրոյի, Իսպանիայի Միգել Հերնանդեսի համալսարաններում:

Հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 9-ը ՀԱԱՀ 8 աշխատակից Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում մասնակցել է «2018 բարձրորակ պտղաբուծության տեխնոլոգիաների ուսուցում» թեմայով դասընթացների:

Հաշվետու տարում ՀԱԱՀ 2 մագիստրոս և 14 աշխատակից մասնակցել է Սինգապուրում, ԱՊՀ և եվրոպական երկրներում կազմակերպված միջազգային 12 գիտաժողովների և հանդես եկել զեկույցներով:

2018թ. ՀԱԱՀ-ում վերապատրաստվել և դասախոսություններով հանդես եկել 23 դասախոսն արտերկրի համալսարաններից (Մինհոյի համալսարան, Արևմտյան Ատիկայի համալսարան, Արևմտյան Շոտլանդիայի համալսարան, Էլկեի Միգել Հերնանդեսի համալսարան և այլն):

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ն հյուրընկալել է հյուրերի (ավելի քան 50 հանդիպում) տարբեր երկրներից: Այցելությունների հիմնական նպատակը երկկողմանի կապերի ստեղծումն էր կամ առկա կապերի ընդլայնումը:

ՀԱԱՀ-ում նաև կազմակերպվել են ավելի քան 15 սեմինարներ և բաց դասեր՝ միջազգային ծրագրերի վերաբերյալ, արտերկրի մասնագետների կամ ՀՀ-ում միջազգային կառույցների ներկայացուցիչների ուժերով:

Արտաքին կապերի դեպարտամենտը աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման ուղղությամբ բարելավել է ՀԱԱՀ կայքի միջազգայնացմանը վերաբերող բաժինը: 2018թ. դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվել է 133 հայտարարություն, որից 49-ը՝ Էրասմուս+ ծրագրի մրցույթների և այլ հայտարարությունների վերաբերյալ, 33-ը՝ նույն ծրագրի մասնակիցների կողմից, մնացածը՝ տարաբնույթ տեղակատվություն:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱԱՀ ուսանողական խորհուրդն ունի 25 տոկոսանոց ներկայացվածություն համալսարանը կառավարող բոլոր մարմիններում՝ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային գիտական խորհուրդներ:

Ուսանողական խորհուրդը ակտիվ մասնակցություն է ունեցել ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման, ուսանողներին ֆինանսական օգնությունների տրամադրման և անվանական կրթաթոշակների նշանակման գործընթացին:

Համալսարանի ուսանողական խորհրդի գործունության հիմնական ուղղություններից են ուսանողների իրավունքների և շահերի ներկայացումն ու պաշտպանությունը: Ուսանողների կողմից առաջարկվել և հետագայում համալսարանի ղեկավարությանն են ներկայացվել տարատեսակ խնդիրներ՝ կապված ուսումնական գործընթացի, քննությունների կազմակերպման, դասախոսությունների որակի բարելավման և դասախոսների հետ:

ՀԱԱՀ ուսանողական խորհուրդը 2018թ. ընթացքում իրականացրել է մշակութային, մարզական, ժամանցային, ճանաչողական, բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- Մարտ ամսին ուսանողական խորհրդի տասնյակ անդամներ մասնակցել են համաքաղաքային ծառատունկին:
- Ապրիլի 24-ին կազմակերպվել է երթ դեպի Ծիծեռնակաբերդ:
- Հունիս ամսին կազմակերպվել է թղթահավաք և հավաքված թուղթը հանձնվել է վերամշակման:
- Սեպտեմբեր ամսին առաջին կուրսեցիների համար կազմակերպվել է երաժշտական ֆլեշմոբ:
- Սեպտեմբերին ուսանողական խորհրդի մի շարք անդամներ մասնակցել են համապետական շաբաթօրյակին:
- Սեպտեմբերին կազմակերպվել է այցելություն Հայաստանի ազգային պատկերասրահ:
- Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել են մի շարք արշավներ Արագածոտնի, Արարատի, Տավուշի մարզեր:
- Հոկտեմբերին կազմակերպվել է այցելություն Արենու գինու փառատոն:
- Հոկտեմբերին կազմակերպվել է երաժշտական ֆլեշմոբ՝ նվիրված Երևանի 2800-ամյակին:
- Հոկտեմբերին կազմակերպվել է այցելություն Արագածոտնի մարզ՝ ներկա գտնվելու Խաչադրման արարողությանը:
- Նոյեմբերին կազմակերպվել է գրքահավաք «Արաբկիր» ուսանողական հանրակացարանի գրադարանի համար:
- Նոյեմբերին կազմակերպվել է այցելություն Մատենադարան:
- Նոյեմբերին կազմակերպվել է այցելություն Գավառի մանկատուն:
- Նոյեմբերին համալսարանի ճեմասրահում կազմակերպվել է ՀԱԱՀ ուսանողների նկարների ցուցահանդես:

- Դեկտեմբերի 7-ին կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակին:
- Դեկտեմբերին իրականացվել են ուսանողական խորհրդի 25-ամյակին նվիրված մարզամշակութային և մտավոր միջոցառումներ, որին մասնակցել է ավելի քան 300 ուսանող:
- Դեկտեմբերի 27-ին կազմակերպվել է «Ոսկե հասկ» ամենամյա 12-րդ մրցանակաբաշխությունը:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Համաձայն ՀԱԱՀ-ի հաստատված հաստիքացուցակի՝ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ համալսարանի և մասնաճյուղերի առկա փաստացի հիմնական աշխատակիցների թիվը **1478** է, որից՝

Վանաձորի մասնաճյուղ՝	39
Սիսիանի մասնաճյուղ՝	20
Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղ՝	73
Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն-մասնաճյուղ՝	31
Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն-մասնաճյուղ՝	23
Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ մասնաճյուղ՝	31

Համալսարանի հիմնական փաստացի աշխատակիցների թիվը 1261 է:

Բացի այդ՝ տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ կատարելու համար աշխատանքային պայմանագրեր են կնքվել 64 անձանց հետ:

Շինվերանորոգման աշխատանքներ կատարելու համար աշխատանքային պայմանագրեր են կնքվել 24 անձանց հետ:

2018 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրեր են կնքվել 234 անձանց հետ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է փաստացի աշխատակիցների թվաքանակն ըստ գործունեության ոլորտների(աղ.9).

Աղյուսակ 9

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում հիմնական փաստացի աշխատողների թիվը

Վարչական	**45**
Պրոֆեսորադասախոսական անձնակազմ	**559**
Պրոֆեսորադասախոսական անձնակազմում ընդգրկված է 600 դասախոս, որից 41-ը՝ ներքին համատեղությամբ:	
Ժամավճարային դասախոսներ	**6**
Դեկանատների, ամբիոնների և լաբորատորիաների ուսումնաօժանդակ անձնակազմ	**190 գործընթացով**
Ուսումնական գործընթացի կառավարման վարչություն	**3 + 22 գործընթացով**
Լեզվի կենտրոն Լեզվի կենտրոնի դասախոսներ	1 6
Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժին	1 ֆիզ.
Քոլեջ	**6**
Հենակետային վարժարան	**27**
Մագիստրատուրա	**8 գործընթացով**

Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	**39 + 5 գործընթացով**
Գիտության դեպարտամենտ՝ իր ստորաբաժանումներով	**4 + 3 գործընթացով**
Բազային ֆինանսավորմամբ ԳՀ ինստիտուտ և կենտրոն, պրոբլեմային լաբորատորիաներ (բազային), ծրագրեր	**57**
Գիտահետազոտական ինստիտուտներում, պրոբլեմային լաբորատորիաներում ընդգրկված է 155 աշխատող:	
Գրադարան	**1 + 27 գործընթացով**
Հեռակա ուսուցման դեպարտամենտ	**21**
Ագրոբիզնեսի դեպարտամենտ	**3**
Ագրոբիզնեսի դեպարտամենտի ծրագիր	**1**
Ագրոբիզնեսի դեպարտամենտի ժամավճարային դասախոսներ	**3**
Տարվա ընթացքում կնքվել է աշխատանքային պայմանագիր 13 դասախոսների հետ՝ ժամավճարային կարգով աշխատելու համար:	
Տնտեսական վարչություն	**4 + 152 գործընթացով**
Տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ (կաթսայատուն) իրականացնելու համար աշխատանքային պայմանագիր է կնքվել 14 անձանց հետ:	
«Բալահովիտ» ՈՒՓՏ **«Ոսկեհատ» ՈՒՓՏ**	**3 + 37 գործընթացով** **4**
Տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ իրականացնելու համար աշխատանքային պայմանագիր է կնքվել 50 անձանց հետ:	
Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տուն	**7 + 16**
Տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ իրականացնելու համար աշխատանքային պայմանագիր է կնքվել 16 անձանց հետ:	

2018 թ. Ընթացքում 4 աշխատակցի շնորհվել է պրոֆեսորի, 15-ին՝ դոցենտի գիտական կոչում:

2018 թ. աշխատանքի է ընդունվել 21 երիտասարդ դասախոս:

Համալսարանի վարկանիշավորման կարևոր ցուցանիշներից մեկը համալսարանում ուսանող-դասախոս հարաբերակցությունն է: Ուսանող-դասախոս հարաբերակցության հաշվարկի համար մենք կարող ենք օգտագործել Common Data Set (CDS) Initiative-ի առաջարկած բանաձևը, որը U.S. News & World Report-ի պահանջն է բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններին համալսարանների վարկանիշային ցուցակում տեղ գրավելու համար:

Բանաձևը հետևյալն է՝

ՈՒ/Դ = [SF + SP/3] / [FFI + (FFN + FPI)/3],

որտեղ՝

SF-ը առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվն է,

SP-ն հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվն է,

FFI--ը դասախոսների թիվն է,

FFN-ն համատեղությամբ աշխատող դասախոսների թիվն է,

FPI-ը ժամավճարով աշխատող դասախոսների թիվն է:

Այսպիսով՝ 2018 թ. ուսանող-դասախոս հարաբերակցությունը ՀԱԱՀ-ի համար, ներառյալ Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջը, կազմում է՝

ՈԽ/Դ = [3159 + 4275/3] / [559 + (41 + 6)/3] = 7,97:

Իսկ այդ նույն հարաբերակցությունը ՀԱԱՀ-ի համար, ներառյալ Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջը և 3 մասնաճյուղերը, կազմում է՝

ՈԽ/Դ = [3301 + 4797/3] / [596 + (41 + 44)/3] = 7,85:

2018թ. ընթացքում 11 աշխատող պարգևատրվել է համալսարանական «Ոսկե հուշամեդալներով» և պատվոգրերով, 8 աշխատող՝ շնորհակալագրով:

Աղյուսակ 10

ՀԱԱՀ-ի մասնաճյուղեր

Հ/հ	Փաստացի աշխատողների թիվը	*Սիսիան*	*Վանաձոր*	*Շիրակ*
	Ընդամենը, որից	20	39	31
1	Վարչական	4	7	-
2	Ուսումնաօժանդակ	6	6	2
3	Վարչատնտեսական	10	9	9
4	Դասախոսական	-	17	20
	Ժամավճարային	23	15	-

Աղյուսակ 11

ՀԱԱՀ-ի Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղ

Հ/հ	Հաստիքային տարակարգի անվանումը	Հաստատված հաստիքներ	Փաստացի աշխատողների թիվը
		20	**23**
1	Վարչատնտեսական	9,25	11
2	Գիտական աշխատողներ	8,5	8
	Բաժնի վարիչ	1,0	-
	Ավագ գիտաշխատող	2,5	3
	Գիտաշխատող	4,0	4
	Կրտսեր գիտաշխատող	1,0	1
3	Ուսումնաօժանդակ անձնակազմ	2,25	4
	I կարգի լաբորանտ	0,5	1
	II կարգի լաբորանտ	1,75	3
		Կենտրոնում աշխատում է գիտությունների 6 թեկնածու	

Աղյուսակ 12

Հ. Պետրոսյանի անվ. հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի կենտրոն մասնաճյուղ

Հ/h	Հաստիքային տարակարգի անվանումը	Հաստատված հաստիքներ	Փաստացի աշխատողների թիվը
		77,5 + 15 սեզոնային	**69+4**
1	Վարչատնտեսական	19,0	16
2	Գիտական աշխատողներ	49.5	48
	Բաժնի վարիչ	5,0	4
	Առաջատար գիտաշխատող	1,0	1
	Ավագ գիտաշխատող	10 ,5	9
	Գիտաշխատող	7,0	5
	Կրտսեր գիտաշխատող	4,0	5
	Լաբորատորիայի վարիչ	3,0	2
	Քիմիկոս-վերլուծաբան	13,0	15
	Լաբորանտ	-	-
	Գործավար, օպերատոր-տեխնիկ	6,0	7
3	Երասխահունի փորձակայան	9,0 + 15 սեզոնային	5
4	Գիտական թեմա	2	4
		Կենտրոնում աշխատում են գիտությունների 2 դոկտոր, 15 թեկնածու	
	Տարվա ընթացքում ընդունվել է 7 սեզոնային աշխատող		

Աղյուսակ 13

ՀԱԱՀ-ի խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն մասնաճյուղ

Հ/h	Հաստիքային տարակարգի անվանումը	Հաստատված հաստիքներ	Փաստացի աշխատողների թիվը
		32.5+ 6 սեզոնային	**31**
1	Վարչատնտեսական	10,0	11
2	Գիտական աշխատողներ	19,0	16
	Բաժնի վարիչ	3,5	3
	Առաջատար գիտաշխատող	2,5	2
	Ավագ գիտաշխատող	5,0	4
	Գիտաշխատող	6,5	6
	Կրտսեր գիտաշխատող	1,5	1
3	Ուսումնաօժանդակ անձնակազմ	3,5	4
	Լաբորանտ	3,5	4
		Կենտրոնում աշխատում են գիտությունների 3 դոկտոր և 10 թեկնածու	
	Տարվա ընթացքում ընդունվել է 6 սեզոնային աշխատող		

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամում 2018թ. օգոստոս–նոյեմբեր ամիսներին ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացվել է ուսումնասիրություն: Ուսումնասիրվել են 01.01.2015-31.12.2017 ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվությունները, և ըստ որոշ ուղղությունների նաև մինչև 30.06.2018 ժամանակահատվածը: Բուհի ղեկավարին ներկայացվել է տեղեկանք ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ըստ ծախսերի և եկամուտների, ինչպես նաև արձանագրված խախտումների և անճշտությունների վերաբերյալ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ուսումնասիրված ժամանակահատվածում համալսարանի աշխատավարձի մոտ 62 տոկոսը վճարվել է կանխիկ եղանակով: Քանի որ կանխիկ վճարումը առավել ռիսկային է, քայլեր են կատարվում աշխատավարձի վճարումը 100 %-ով անկանխիկ եղանակով կատարելու ուղղությամբ:

Կարգավորվել է նաև ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքումը: Նախկինում կարճաժամկետ տարբեր տեսակի ծառայությունների մատուցման համար, օրինակ՝ բանվորական ծառայություններ, կնքել են աշխատանքային պայմանագրեր՝ ազատվող աշխատակիցներին վճարելով բավականին մեծ վերջնահաշվարկ, ինչը չի նախատեսվում ծառայությունների մատուցման պայմանագրերով: Այս առաջարկը նույնպես կատարվել է. Այժմ համալսարանը կարճաժամկետ աշխատանքների համար կնքում է միայն ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ մանրամասն ներկայացնելով պայմանագրում պարտադիր նշվող դրույթները և վավերապայմանները:

Ընթացիկ նորոգումների առումով նույնպես արձանագրվել են խախտումներ: Մասնավորապես, ընթացիկ նորոգման աշխատանքների ծավալը զգալիորեն գերազանցել է հոգաբարձուների խորհրդի հաստատած բյուջեներով և հաշվետվություններով ձևակերպված ծավալները: Նախկինում նախահաշիվները կազմվել են թերի, առանց չափագրման փաստաթղթերի և թերությունների ակտերի, իսկ կատարողական ակտերը կազմված են առանց կատարված աշխատանքների ծավալների և տեխնիկական բնութագրերի նշման: Համալսարանը հաշվի կառնի Ծառայության կողմից տրված առաջարկությունները՝ ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պատշաճ ձևակերպումների առումով: Մասնավորապես, ընթացիկ նորոգման աշխատանքները բացառապես կիրականացվեն Գնումների մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Կատարված աշխատանքների ընդունման համար կձևավորվեն մասնագիտացված հանձնաժողովներ: Համալսարանը հաշվի կառնի նաև գնումների գործընթացում հայտնաբերված թերությունները և քայլեր կձեռնարկի դրանց արագ վերացման ուղղությամբ: Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների մեծ մասը չի պատկերացնում իր պարտականությունները գնումների գործընթաց կազմակերպելու ժամանակ: Պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարները իրենց ստորաբաժանման կարիքների համար զեկուցագրեր են ուղարկել համալսարանի ղեկավարությանը՝ առանց պլանավորման, առանց հաշվի առնելու բյուջեով նախատեսված ու հաստատված միջոցները, երբ և ինչպես պատահի, առանց տեխնիկական բնութագրերի, առանց վճարման և մատակարարման ժամանակացույցի ու գնման ձևի հիմնավորման:

Հարդյունս կառուցվածքային փոփոխությունների, համալսարանն առանձնացրել է գնումների բաժինը և մատակարարումների բաժինը: Մատակարարումների բաժինը աջակցելու է պատասխանատու ստորաբաժանումներին՝ կարիքների գնահատման, գնման հայտերի կազմման, փաստաթղթերն ըստ Գնումների մասին ՀՀ օրենքի պահանջների ներկայացնելու աշխատանքներում, գնված ապրանքները մատակարարելու, ընդունման և հանձնման աշխատանքները հավուր պատշաճի կազմակերպելու և փաստաթղթավորելու աշխատանքներում: Գնումների բաժինը կազմակերպելու է մրցույթների իրականացումը, պայմանագրերի կնքումը, վերահսկողությունը, համալսարանի գնումների տարեկան ծավալների հրապարակումն ըստ օրենքի:

Մինչև վերոնշյալ փոփոխությունները՝ 2018թ. երեք եռամսյակների ընթացքում ՀԱԱՀ հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված իրավունքների և պարտականությունների շրջանակում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում կազմակերպվել են հիմնադրամի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման ընթացակարգեր: Գնման գործընթացը կազմակերպվել է գնանշման հարցման, էլեկտրոնային աճուրդի, մեկ անձից գնման ընթացակարգերի միջոցով: Կազմվել, փոփոխվել, լրացվել և գնումների միասնական www.gnumner.am կայքում հրապարակվել են գնման պլանը, կազմվել և հանձնաժողովների անդամների հաստատմանն են ներկայացվել նիստերի արձանագրությունները, իսկ պատվիրատուի ղեկավարի հաստատմանը՝ գնման պլանը, հանձնաժողովների կազմավորման հրամանների նախագծերը, գնումների ընթացակարգերի արձանագրությունները, կնքմանը՝ գնման պայմանագրերը:

Կազմակերպվել է գնանշման 22 հարցման ընթացակարգ, որի արդյունքում կնքվել է 29 պայմանագիր, 7 էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ՝ 16 պայմանագիր, մեկ անձից գնման 27 ընթացակարգ՝ 44 պայմանագիր, կազմվել և կողմերի հաստատմանն է ներկայացվել 2 համաձայնագիր:

Կատարվել են գնման ընթացակարգեր կազմակերպելու հայտարարությունների ռուսերեն և անգլերեն թարգմանություններ, համակարգվել են դրանց էլեկտրոնային հրապարակման գործընթացները www.armeps.am/ppcm/, www.armeps.am և www.eauction.armeps.am կայքերում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության
01.01.2018թ-31.12.2018թ ամփոփ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2018թ	**844,384**	(հազ. դրամ)
Փաստացի մուտքեր		
ա) պետ. բյուջե, այդ թվում՝	**622,900**	(հազ. դրամ)
1. ՀՀ օրենքով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցում	31,038	(հազ. դրամ)
2. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում	16,534	(հազ. դրամ)
3. Սահմանամերձ համայնքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում	7,786.5	(հազ. դրամ)
4. Պատիվ ունեմ	8,090.0	(հազ. դրամ)
բ) արտաբյուջե	**1,609,351**	(հազ. դրամ)
գ) նվիրատվություն	**150,000**	(հազ. դրամ)
Ընդամենը մուտքեր	**2,382,251**	(հազ. դրամ)

Աղյուսակ 14

Հ/h	Հոդվածները	Պետբյուջե		Արտաբյուջե		Ընդամենը	
		նախատ., հազ դրամ	փաստացի, հազ. դրամ	նախատ., հազ դրամ	փաստացի, հազ. դրամ	նախատ., հազ դրամ	փաստացի, հազ. դրամ
1	Աշխատավարձ ե/h	538,900	565,456	1,350,000	1,200,521	1,888,900	1,765,977
2	Կրթաթոշակ	38,000	35,265	2,000	200	40,000	35,465
	Պետ. նպաստ	29,000				29,000	-
3	Էլ. Էներգիա	6,200	5,800	43,500	40,400	49,700	46,200
4	Գազ	3,500	2,050	42,200	17,238	45,700	19,288
5	Ջուր	1,200	1,200	16,000	10,138	17,200	11,338
6	Կապ, ինտերնետ, փոստ. ծախս	3,300	1,800	14,800	10,400	18,100	12,200
7	Տպագրական ծախսեր	1,200	1,200	12,800	6,900	14,000	8,100

8	Տրանսպորտային ծախսեր	2,800	2,800	16,500	12,400	19,300	15,200
9	Գործուղում (ծրագր.)	1,600	1,600	9,000	9,600	10,600	11,200
10	Կոմունալ ծախսեր	2,800	1,800	11,200	3,920	14,000	5,720
11	Գրաս. և տնտ. ծախսեր (աուդիտ)	4,000	2,000	11,000	13,200	15,000	15,200
12	Գույք՝ գրաս., լսար.			9,000	820	9,000	820
13	Համակ. տեխնիկա և սպաս. ծախսեր			10,000	3,620	10,000	3,620
14	Լաբորատոր սարքեր և քիմ. ռեակ.			5,000	1,200	5,000	1,200
15	Սարքավորումներ			6,000		6,000	-
16	Գրականություն			10,000	5,470	10,000	5,470
17	Շենք. ընդ. նորոգում			40,000	1,200	40,000	1,200
18	Ուսանող. ֆոնդ (ա.թ. եր. ծր.)			9,000	2,200	9,000	2,200
19	Բալահովիտ, Ոսկեհատ և գիտ. կենտրոններ			8,000	65,050	8,000	65,050
20	Հարկեր, տուրքեր			46,000	42,000	46,000	42,000
21	Այլ ծախսեր	2,500	1,929	8,500	3,800	11,000	5,729
Ընդամենը		635,000	622,900	1,680,500	1,450,277	2,315,500	2,073,177

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019թ 1,153,458 (հազ. դրամ)

այդ թվում՝ նվիրատվություն 150,000 (հազ. դրամ)

ՀԱԱՀ գիտության ոլորտի 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

2018թ. մուտքեր 148,023 (հազ.դրամ)

	Հոդվածներ	Գումար
1	Թեմատիկ	30,989
2	Բազային	84,601.9
3	Գիտ.աստիճ. հավելավճար	9,372.6
4	Ասպիրանտ կ/թ	5,820
5	Ասպիրանտ. ղեկավարներ և դիմ., օտար լեզվի և համ. տեխ. ուսուցում	17,239.5

2018թ. ելքեր

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտահարկ	110,072
	Ասպիրանտ կ/թ	5,820
2	Սարքավորումների ձեռք բերում	4,402
	Ասպիրանտ. և օտար լեզվի ուս.	17,240
3	Պահպանման ծախսեր	10,490
ԸՆԴԱՄԵՆԸ		148,023

«Զարթոնք» հանգստյան տան 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

Հաշվետու ժամանակաշրջանն ընդգրկում է 2018թ. «Զարթոնք» հանգստյան տան ձմեռային և ամառային աշխատանքային գործունեությունը: Այդ ընթացքում հանգստյան տան հաճախորդների թիվը կազմել է 1400 մ/օր: Հաշվետու ժամանակաշրջանում հանգստյան տան հասույթը կազմել է 15 523 հազար դրամ, իսկ ծախսերը՝ 21 542 հազար դրամ, ըստ հետևյալ հոդվածների՝

/հազ. դրամ/

1	Աշխատավարձ	13,236
2	Սննդամթերք	5,444
3	Գազ	1,136
4	Էլ. էներգիա	1,426
5	Կապ	52
6	Ջուր-կոյուղի	150
7	Այլ ծախսեր	98
ԸՆԴԱՄԵՆԸ		21,542

ՀԱԱՀ-ի Սիսիանի մասնաճյուղի 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2018թ. **13,182** (հազ. դրամ)

Մուտքեր **48,829** (հազ. դրամ)
Ելքեր (հազ. դրամ)

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտահարկ	34,605
2	Կոմունալ և տնտ. ծախսեր	5,572
3	Գույքի ձեռքբերում	333
4	Այլ ծախսեր	268
ԸՆԴԱՄԵՆԸ		40,778

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01. 2019թ. 21,233 (հազ. դրամ)

ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղի 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2018թ. 8,994.3 (հազ. դրամ)

Մուտքեր 80,868.4 (հազ. դրամ)
Ելքեր (հազ. դրամ)

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտահարկ	47,248.2
2	Կոմունալ և տնտ. ծախսեր	8,569.8
3	Գույքի ձեռքբերում	1,390
4	Նորոգում	960
5	Այլ ծախսեր	3,232
ԸՆԴԱՄԵՆԸ		61,400

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019թ. 28,462.7 (հազ. դրամ)

Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ մասնաճյուղի 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2018թ. 74 (հազ. դրամ)
Մուտքեր
ա/ պետ.բյուջե 41,307 (հազ. դրամ)
բ/ արտաբյուջե 1,684 (հազ. դրամ)
Ելքեր

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտահարկ	34,636
2	Կրթաթոշակ	4,966
3	Գույքի ձեռքբերում	735
4	Պահպանման ծախսեր	2,053
ԸՆԴԱՄԵՆԸ		42,390

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019թ. 675 (հազ. դրամ)

ՀԱԱՀ վարժարանի 2018թ ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

2018թ. ֆինանսավորում 56,056 (հազ. դրամ)

2018թ. ելքեր 56,056 (հազ. դրամ)

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտահարկ	53,958

Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն մասնաճյուղի 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2018թ.	124	(հազ. դրամ)
2018թ. մուտքեր	45,155.4	(հազ. դրամ)
այդ թվում՝		
բազային	37,608	(հազ. դրամ)
թեմատիկ		(հազ. դրամ)
գիտ. աստիճան	3,052	(հազ. դրամ)
այլ / ա/բյուջե/	3,165	(հազ. դրամ)
ՀԱԱՀ	1,330	(հազ. դրամ)

2018թ. ելքեր

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտահարկ	35,761
2	Տնտես. և այլ ծախսեր	8,943.6
ԸՆԴԱՄԵՆԸ		44,704.6

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019թ. 574.8 (հազ. դրամ)

Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղի 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2018թ.	476.2	(հազ. դրամ)
2018թ. մուտքեր	32,499.4	(հազ. դրամ)
այդ թվում՝		
բազային	24,764.4	(հազ. դրամ)
թեմատիկ	5,000	(հազ. դրամ)
գիտ. աստիճան	1,500	(հազ. դրամ)
այլ / ա/բյուջե/		(հազ. դրամ)
ՀԱԱՀ	1,235	(հազ. դրամ)

2018թ. ելքեր

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտահարկ	24,446
2	Տնտես. և այլ ծախսեր	7,342.7
ԸՆԴԱՄԵՆԸ		31,788.7

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019թ. 1,186.9 (հազ. դրամ)

Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղի 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2018թ.	6,784	(հազ. դրամ)
2018թ. մուտքեր՝ ընդամենը	142,273	(հազ. դրամ)
այդ թվում՝		
բազային	89,417	(հազ. դրամ)
թեմատիկ	10,000	(հազ. դրամ)
գիտ. աստիճան	9,950	(հազ. դրամ)
այլ / ծրագրեր/	4,628	(հազ. դրամ)
Ա/բյուջե	28,278	(հազ. դրամ)

2018թ. ելքեր

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտահարկ	105,650
2	Սարքավորումների ձեռք բերում	127
3	Պահպանման ծախսեր	33,811
ԸՆԴԱՄԵՆԸ		139,588

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019թ.	9,469	(հազ.դրամ)

ՀԱԱՀ-ի «Բալահովիտ» և «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսությունների 2018թ. ֆինանսական գործունեության հաշվետվություն

2018թ. մուտքեր

1	Իրացումից գումար	49,196
2	* ՀԱԱՀ-ից ներդրում / ավտոբուս/	65,050
ԸՆԴԱՄԵՆԸ		114,246

2018թ. ելքեր

	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտահարկ	82,553
2	Կոմունալ և տնտեսական ծախսեր	14,056
3	Վառելիք, քսանյութ	8,903
4	Ավտոպահեստամասեր և ավտոբուս	3,624
5	Բուժանյութեր	2,100
6	Պարարտանյութեր	810
7	Տնտեսական նյութեր / այդ թվում՝ կաթի արտադրության/	2,200
ԸՆԴԱՄԵՆԸ		114,246

Նախագիծ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2019թ.
ֆինանսական միջոցների, մուտքերի-ծախսերի
ՆԱԽԱՀԱՇԻՎ

1. Ֆինանսական միջոցների մնացորդը առ 01.01.2019թ. **1 153 458** ***(հազ. դրամ)***
2. Սպասվող մուտքերը

ա) պետբյուջե 623 000 (հազ. դրամ)
բ) արտաբյուջե 1 550 000 (հազ. դրամ)

3. Ընդամենը ***2 173 000 (հազ. դրամ)***

Աղյուսակ 15

Սպասվելիք ծախսեր

Հ/հ	Հոդվածները	Պետբյուջե հազ. դրամ	Արտաբյուջե հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
1	*Աշխատավարձ, եկամտահարկը ներառյալ*	565000	1220000	1785000
2	*Կրթաթոշակ*	31800	200	32000
3	*Էլ. էներգիա*	6000	41000	47000
4	*Ջուր*	1200	10300	11500
5	*Գազ*	3500	16500	20000
6	*Կապ, փոստ, ինտերնետ*	3300	9700	13000
7	*Տպագրական ծախսեր*	1200	7300	8500
8	*Տրանսպորտային ծախսեր*	2800	12700	15500
9	*Գործուղում*	1600	14400	16000
10	*Կոմունալ ծախսեր*	2100	11900	14000
11	*Գրաս. ծախսեր և քիմ. ռեակտիվներ*	3000	12000	15000
12	*Գույք, այդ թվում՝ գրասենյակային, լսարանային*		8000	8000
13	*Համակարգչային տեխնիկա*		20000	20000
14	*Լաբորատոր սարքեր*		5000	5000
15	*Սարքավորումներ*		15000	15000
16	*Գրականության ձեռքբերում*		5000	5000
17	*Շենք. և շին. ընթացիկ նորոգում*		60000	60000
18	*Ուսանող. ֆոնդ, երիտասարդ. ծրագիր և ուսխորհուրդ*		3200	3200
19	*Ներդրում ՈՒՍՓՏ (Բալահովիտ և Ոսկեհատ) և գիտական կենտրոններ*		25000	25000
20	*Մյասնիկյան 2 հասցեում գտնվող մասնաշենքի հիմնանորոգում*		210000	210000
21	*Հարկեր, տուրքեր*		42000	42000
22	*Այլ ծախսեր*	1500	8500	10000
	ԸՆԴԱՄԵՆԸ	623000	1757700	2380700

Սպասվելիք մնացորդն առ 01. 01. 2020թ.՝ 945 758 հազ. դրամ

Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման համար 2019թ. նախատեսվում են հետևյալ միջոցները

Սպասվելիք ֆինանսավորում

1. Թեմատիկ դրամաշնորհ 32 000 հազ. դրամ
2. Ենթակառույցների պահպ. 94 600 հազ. դրամ
3. Գիտ. աստիճ. համակարգում 10 500 հազ. դրամ
4. Ասպիր. ղեկավ. 17 300 հազ. դրամ
5. Ասպիրանտ. կրթաթոշակ 5 200 հազ. դրամ

Ընդամենը 159 600 հազ. դրամ

Սպասվելիք ծախսեր

1. Աշխատավարձ և եկամտային հարկ 142 000 հազ. դրամ
2. Կրթաթոշակ 5 200 հազ. դրամ
3. Այլ ծախսեր 12 400 հազ. դրամ

Ընդամենը 159 600 հազ. դրամ

Համալսարանի հենակետային վարժարանի 2019 թ. ֆինանսավորման նախագիծը ունի հետևյալ պատկերը

Սպասվելիք ֆինանսավորում 56 300 հազ. դրամ

Սպասվելիք ծախսեր

1. Աշխատավարձ և եկամտային հարկ 52 000 հազ. դրամ
2. Այլ (պահպանման ծախսեր) 4 300 հազ. դրամ

Ընդամենը 56 300 հազ. դրամ

Համալսարանի մասնաճյուղերի 2019թ. բյուջեի նախահաշիվների նախագծերը ներկայացված են ստորև.

Սիսիանի մասնաճյուղի 2019թ. նախահաշվի նախագիծ

Դրամական մնացորդն առ 01.01.2019 թ. 21 223 հազ. դրամ

Սպասվելիք մուտքեր 38 000 հազ. դրամ

Ծախսեր	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտային հարկ	33 000
2	Այլ ծախսեր	12 900
3	Ընդամենը	45 900

Սպասվելիք մնացորդն առ. 01.01. 2020թ. 13 333 հազ. դրամ

Վանաձորի մասնաճյուղի 2019թ. նախահաշվի նախագիծ

Դրամական մնացորդ առ 01.01. 19 թ. 28 462,7 հազ. դրամ
Սպասվելիք մուտքեր 54 717 հազ. դրամ

Ծախսեր	Հոդվածներ	Գումար
1	Աշխատավարձ և եկամտային հարկ	53 485
2	Այլ ծախսեր	25 795
3	Ընդամենը	79 280

Սպասվելիք մնացորդը առ 01.01. 2020թ. 3 899,7 հազ. դրամ

«Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղի 2019թ. նախահաշվի նախագիծ

Դրամական մնացորդն առ 01.01.2019 թ. - 574,8 հազ. դրամ

Սպասվելիք մուտքեր

1	Թեմատիկ ֆինանս.	5 000
2	Ենթակ. պահպ. և զարգ.	37 608
3	Գիտ. աստիճ. հավելավճար	3 600
4	Այլ (արտադր.) մուտքեր	3 000
	Ընդամենը	49 208

Սպասվելիք ծախսեր

1	Աշխատավարձ և եկամտային հարկ	41 908
2	Այլ ծախսեր	7 874.8
	Ընդամենը	49 782.8

Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղի 2019թ. նախահաշվի նախագիծ

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019 թ. 1 186,9 հազար դրամ

Սպասվելիք մուտքեր

1	Ենթակառ. պահպ. և զարգ.	24 764
2	Հավելավճար	1 500
3	Թեմատիկ	6 000
4	Այլ (արտադրական) մուտքեր	
	Ընդամենը	32 264

Սպասվելիք ծախսեր

1	Աշխատավարձ և եկամտային հարկ	28 207
2	Այլ ծախսեր	4 057
3	Ընդամենը	32 264

Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղի 2019թ. նախահաշվի նախագիծ

Դրամական միջոցների մնացորդն առ 01.01.2019 թ. 9 469 հազ. դրամ

Սպասվելիք մուտքեր

1	Թեմատիկ ֆինանսավորում	15 652
2	Ենթակ. պահպ և զարգ.	89 417
3	Հավելավճար	10 200
4	Այլ (արտադր.) մուտքեր	30 000
	Ընդամենը	***145 269***

Սպասվելիք ծախսեր

1	Աշխատավարձ և եկամտային հարկ	105 206
2	Գույքի ձեռք բերում	13 500
3	Այլ ծախսեր	31 113
	Ընդամենը	***149 819***

Սպասվելիք մնացորդն առ 01.01.2020թ. 4 919 հազ. դրամ

«Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի 2019թ. նախահաշվի նախագիծ

Դրամական մնացորդն առ 01.01.19 թ. 675 հազ. դրամ

2019թ. սպասվելիք մուտքեր

Բյուջե 41 300 հազ. դրամ

Ա/բյուջե 1 700 հազ. դրամ

Ընդամենը ***43 000 հազ. դրամ***

Սպասվելիք ծախսեր

1	Աշխատավարձ և եկամտային հարկեր	34 600
2	Կրթաթոշակ	5 000
3	Այլ ծախսեր	4 075
	Ընդամենը	43 675